



*Հեղափոխական խմբի ղեկավար՝  
ՎԱՐԴԱՆ ԿՈՐՅՈՒՆԻ ԱԹՈՅԱՆ  
տնտեսագիտության թեկնածու*

*Հեղափոխական խմբի անդամներ՝  
ՀՊՏՀ տնտ. կարգավորման և ՄՏՀ ֆակուլտետի  
ՄՏՀ մասնագիտության II կուրսի մագիստրանտներ  
ՍՏԵԼԼԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ  
ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ  
ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ  
ՌՈՋԱ ԲՈՒԴԱՂՅԱՆ  
ՌՈՒՋԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ  
ԱՍՏՂԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ «ՈՒՂԵՂԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ  
ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58  
Ա 942

**Հրատարակության է երաշխավորել  
ՀՊՏՀ գիտական խորհուրդը**

**Մասնագիտական խմբագիր՝**  
**Թադևոսյան Զ. Ա.**  
տ.գ.դ., դոցենտ

**Գրախոսներ՝**  
**Գրիգորյան Ա. Վ.**  
տ.գ.թ., դոցենտ  
**Բաբաջանյան Ս. Ս.**  
տ.գ.թ., ասիստենտ

**Խմբագրական խորհուրդ՝**  
**Աթոյան Կ. Լ.** (նախագահ)  
տ.գ.դ., պրոֆեսոր  
**Վարդանյան Գ. Ի.**  
տ.գ.դ., պրոֆեսոր  
**Սուվարյան Յու. Մ.**  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր  
**Ավետիսյան Ս. Ս.**  
տ.գ.դ., պրոֆեսոր

Արտասահմանյան առաջատար համալսարանական «ուղեղային կենտրոն-  
Ա 942 ների» գործունեության ուսումնասիրությունն ու լավագույն փորձի ներդրման  
հնարավորությունները ՀՀ-ում / Վ. Աթոյան, Ս. Հովսեփյան, Ա. Մկրտչյան, Շ. Մովսիս-  
յան, Ռ. Բուդաղյան, Ռ. Թադևոսյան, Ա. Մուրադյան.– Եր.: Տնտեսագետ, 2014.–84 էջ.-  
(«Ամբերդ» մատենաշար):

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» հետազո-  
տական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրա-  
գրի շրջանակներում: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են ար-  
տասահմանյան վեց և հայաստանյան ինը համալսարանական «ուղեղային  
կենտրոնների» գործունեությունը, որոնց հիման վրա էլ կատարվել են  
առաջարկություններ արտասահմանյան լավագույն փորձի՝ ՀՀ-ում ներդրման  
վերաբերյալ, ինչը և սույն հետազոտության հիմնական նպատակն է:

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-61-098-6

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.  
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

Ներածություն.....	5
<b>1. Արտասահմանյան առաջատար համալսարանական ՈՒԿ-ների գործունեության և փորձի ուսումնասիրությունը .....</b>	<b>7</b>
1.1. <i>Լոնդոնի փնտրեւագիտության և քաղաքական գիտությունների դպրոց, Հանրային քաղաքականության ինստիտուտ</i> .....	7
1.2. <i>Մթենֆորդի համալսարանի Հովերի ինստիտուտ</i> .....	11
1.3. <i>Կոլումբիայի համալսարանի Մոյորակի ինստիտուտ</i> .....	18
1.4. <i>Մթենֆորդի համալսարանի Միջազգային անվտանգության և համագործակցության կենտրոն</i> .....	24
1.5. <i>Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտ (MGIMO)</i> .....	30
1.6. <i>Սասեքսի համալսարանի Ջարգացման հետազոտությունների ինստիտուտ</i> .....	33
1.7. <i>Կանիասթեման մեթոդներ</i> .....	37
<b>2. Հայաստանյան համալսարանական հետազոտական կենտրոնների գործունեության ուսումնասիրությունը .....</b>	<b>44</b>
2.1. <i>Երևանի պետական համալսարան</i> .....	45
2.1.1. <i>ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ</i> .....	45
2.1.2. <i>ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն</i> .....	47
2.1.3. <i>ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն</i> .....	50
2.2. <i>Հայասրանի ամերիկյան համալսարան</i> .....	53
2.2.1. <i>Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոն</i> .53	
2.2.2. <i>Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր</i> ....	56
2.2.3. <i>Հակոբյան բնապահպանական կենտրոն</i> .....	58

2.2.4. Հանրային առողջապահական ծառայությունների հեղափոխությունների և զարգացման կենտրոն.....	58
2.2.5. Հայաստանի ամերիկյան համալսարան, Գործարար հեղափոխման և զարգացման կենտրոն.....	60
2.3. Հայ-ռուսական (Մլավոնսկան) համալսարանի փարսիստիկական հեղափոխությունների գիտական կենտրոն.....	61
<b>3. Արտասահմանյան համալսարանական ուղեղային կենտրոնների փորձի ներդրման հնարավորությունը ՀՀ համալսարանական ՈՒԿ-ներում .....</b>	<b>63</b>
Եզրակացություն.....	71
Օգտագործված գրականության ցանկ.....	74
Հավելվածներ.....	75
Անփոփոմներ .....	79

Արդի ժամանակաշրջանում քաղաքակրթական-ազգային և պետական համակարգերի անվտանգությունը, մասնավորապես՝ արդյունավետությունն ու մրցունակությունը, առավել քան նախկինում պայմանավորված են այդ համակարգերի մտավոր ռեսուրսների քանակով, որակով, դրանք կազմակերպելու և իրենց շահերին համապատասխան նպատակաուղղված կիրառելու ունակությամբ: Հայտնի է նաև, որ բացի ավանդական գիտակրթական կառույցներից, ակադեմիական բնույթի ինստիտուտներից և բուհական հաստատություններից, մտավոր ռեսուրսների կազմակերպման կարևոր ձևաչափ են նաև հատուկ հետազոտական կենտրոնները: Նման կառույցները հայկական տեղեկատվական դաշտում ընդունված է անվանել «ուղեղային կենտրոններ» (ՈւԿ): Հատկանշական է, որ Արևմուտքում ՈւԿ-ները ավելի հաճախ կոչվում են «մտքի ֆաբրիկաներ», «ազգային շահ արտադրող» կամ «գաղափարախոսություն ստեղծող» կազմակերպություններ՝ այդպիսով վերագրելով դրանց ավելի դինամիկ իմաստ: *Դասական ՈւԿ-ների* (որպես այդպիսին ավանդաբար ընդունված է համարել Երկրորդ համաշխարհայինից հետո ստեղծված և իրենց հանրությունում արդեն ինստիտուցիոնալ կարգավիճակ ձեռք բերած ՈւԿ-ները) խնդիրն է ազգային անվտանգության (ԱԱ) համատեքստում նորարարական գաղափարներ, հեռանկարային նախագծեր, հայեցակարգեր, տարաբնույթ ռազմավարական-մարտավարական մշակումներ, փորձագիտական խորհրդատվություններ տրամադրել պետական-քաղաքական (հաճախ նաև հոգևոր) կառույցներին և ազգային ուղղվածության կապիտալը ներկայացնող ընկերություններին: Օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ-ին են պատկանում, մասնավորապես՝ «տեղեկատվական պատերազմ», «ցանցակենտրոն-տեղեկատվական համակարգ» հասկացությունների ձևավորումը, դրանց հետագա հայեցակարգային կատարելագործումը և վերածումը կիրառական տեխնոլոգիաների: Համարվում է, որ նման մշակումների շտրհիվ է նաև, որ Միացյալ Նահանգներն առաջատար դիրքեր է գրավում գլոբալ հարթությունում: Բնորոշ է նաև, որ կայացած ՈւԿ-ների կառուցվածքում հաճախ լինում են նաև կրթական կենտրոններ, որոնց նպատակն է ազգային ընտրանին համալրել գաղափարապես, ստեղծագործ և մասնագիտորեն լավ պատրաստված կադրերով<sup>1</sup>:

Ելնելով վերոնշյալից ու հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն անցումային տնտեսությամբ երկիր է, որտեղ «ուղեղային կենտրոնները» կարող են դառնալ փոփոխությունների կատալիզատոր, կնպաստեն երկրի քա-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, «Ուղեղային կենտրոններ» և ազգային անվտանգություն, [http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT\\_ID=2213](http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT_ID=2213)

ղաքական միջավայրի բարեփոխմանը և քաղաքացիական ուժեղ հասարակության կայացմանը, ուստի կարող ենք պնդել, որ սույն հետազոտությունը ժամանակի հրամայականն է: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել համաշխարհային համալսարանական առաջատար «ուղեղային կենտրոնների» փորձը և, ծանոթանալով ՀՀ համալսարանական միջավայրում առկա «ուղեղային կենտրոններին», հստակեցնել դրանցում միջազգային լավագույն փորձի ներդրման հնարավորությունները:

Վերոնշյալ նպատակների իրականացման համար աշխատանքի առաջին մասում ներկայացվում են մեր ուսումնասիրած առաջատար համալսարանական վեց «ուղեղային կենտրոնների» (ՈԻԿ) գործունեության բնույթն ու առանձնահատկությունները, երկրորդ մասում ներկայացվում են հայաստանյան համալսարանական ՈԻԿ-ները, երրորդ մասում արվում են առաջարկություններ համալսարանական ՈԻԿ-ների լավագույն փորձը ՀՀ-ում ներդրման վերաբերյալ:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻԿ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակներից ելնելով՝ ուսումնասիրել ենք ԱՄՆ-ի Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տնօրեն Ջ. Մաքգանի 2012 թ. տարեկան զեկույցում առաջատար 6 ՌԻԿ-ներ, մասնավորապես՝ դրանց գործունեության ուղղությունները, աշխատակազմի կառուցվածքը, ներառված անձանց գիտական մակարդակները, ֆինանսավորման աղբյուրներն ու ֆինանսական ռեսուրսները, ուսանողների ներգրավման ձևաչափերը: Նշենք նաև, որ զեկույցում ՌԻԿ-ների գնահատումն արվում է՝ ըստ ճշգրիտ հետազոտություն կատարելու, սոցիալական նորամուծության գաղափարներին նպաստելու և հասարակության ու քաղաքականություն մշակողների միջև կամուրջ դառնալու ունակության<sup>2</sup>:

### 1.1 | Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոց, Հանրային քաղաքականության խումբ

Լոնդոնի տնտեսագիտության դպրոցը (LSE) մասնագիտացված համալսարան է՝ համաշխարհային ընդգրկումով: Համալսարանի հետազոտությունները և ուսուցումը տարածվում են սոցիալական գիտությունների ամբողջ լայնությամբ՝ տնտեսագիտությունից, քաղաքագիտությունից և իրավագիտությունից մինչև սոցիոլոգիա, հաշվապահություն և ֆինանսներ: Հիմնադրվել է 1895 թ. Բեստրիս և Միդլի Վեբբերի կողմից: Դպրոցն ունի ակադեմիական գերազանցության հռչակ: Համալսարանի աշխատակազմից և շրջանավարտներից 16-ն արժանացել են Նոբելյան մրցանակի:

LSE-ն ունի հետազոտական 19 կենտրոն և հետազոտական 17 խումբ:

LSE-ի հանրային քաղաքականության խումբը (PPG) ստեղծվել է 1998 թ., և ավելի քան 10 տարիների ընթացքում խմբի ուրվագիծը և չափերն էականորեն աճել են: Այժմ խումբն ընդգրկում է անդամներ LSE-ի շատ բաժանմունքներից և հայտնի այլ համալսարաններից: Խումբը, միաժամանակ,

<sup>2</sup> Mc Gann J.G., 2012 Global Go to Think Tanks Report and Policy Advice, 2012 Think Tanks and Civil Societies Program, International Relations Program University of Pennsylvania, Philadelphia, PA USA.

իրականացնում է առևտրային և ոչ առևտրային գործունեություն, ներառյալ հետազոտություններ, խորհրդատվություն, սեմինարների և գիտաժողովների կազմակերպում, հրապարակումներ:

Խումբը նախաձեռնում է խորհրդատվական և հետազոտական աշխատանքներ հետևյալ սուբյեկտների համար՝

- գլխավոր կառավարական ստորաբաժանումների և խորհրդարանական գործակալությունների,
- բարեգործական և ներդրումային խմբերի,
- զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների,
- հետազոտական խորհուրդների և հիմնադրամների,
- խոշոր ընկերությունների,
- արտասահմանյան կառավարական կազմակերպությունների,
- միջազգային կազմակերպությունների:

Խումբը սերտորեն աշխատում է LSE-ի ձեռնարկության հետ, որը ստանձնել է նախագծի կառավարումը և LSE-ի իրականացվող խորհրդատվական ողջ գործունեության հետ առնչվող պայմանագրային բանակցությունների վարումը: Խումբը նաև աշխատում է LSE-ի հետազոտական դրամաշնորհների և պայմանագրերի գրասենյակի հետ, որը զբաղվում է դրամաշնորհային ֆինանսավորմամբ և հետազոտությունների կարգավորմամբ:

***PPG-ի հետազոտությունները կենտրոնացված են հետևյալ ուղղություններում՝***

- հանրային քաղաքականության գնահատում և հետազոտություն,
- հանրային հատվածի նորարարություններ,
- հանրային հատվածի արտադրողականություն,
- հանրային կառավարման նորագույն միտումների վերլուծություն, հատկապես մասնավորեցում, մասնավոր ֆինանսավորման նախաձեռնություն, հանրային և մասնավոր հատվածների համագործակցություն,
- կառավարություն-քաղաքացի հարաբերություններ, ներառյալ դեմ առ դեմ տեղեկության փոխանակում, լրագրերի վրա հիմնված և առցանց հաղորդակցության մեթոդներ,
- տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունը կառավարման վրա, ներառյալ թվային դարաշրջանի կառավարում,
- էլեկտրոնային կառավարության և էլեկտրոնային կառավարման բոլոր ասպեկտներ,



- ընտրական համակարգերի, կառավարության ինստիտուցիոնալ նորարարությունների և ժողովրդավարական նախաձեռնությունների մոդելավորում,
- հանրային կարծիքի գնահատման հարցերի կազմում և կիրառում, հետազոտություններ և վերլուծություն (և՛ առցանց, և՛ ավանդական եղանակներով),
- կենտրոնացված խմբերի և որակական համեմատական վերլուծությունների օգտագործում որպես հետազոտական գործիքներ<sup>3</sup>:

Խումբը համակարգում է իր աշխատանքները կարիերայի ծառայության, LSE-ի փորձաշրջանների կազմակերպման հետ, որոնք զբաղվում են շրջանավարտներին Պատվամենտում, գործընկերների մոտ և հարակից այլ կազմակերպություններում աշխատանքի տեղավորման հարցերով: Խումբն իրականացնում է նաև քաղաքականության գնահատման մեթոդների, Մեծ Բրիտանիայի կառավարման և պետական կառավարման թրեյնինգներ, ինչպես նաև ներածական դասընթացներ:

LSE-ին ունի սերտ կապեր խորհրդարանի և կառավարության հետ, որը հնարավորություն է ընձեռում հանդիպումներ կազմակերպելու և իրականացնելու տեղեկատվության և տեսակետների փոխանակում կառավարության և հանրային հատվածի համագործակցության կարևոր ասպարեզներում:

**PPG-ի աշխատակազմը և ասոցացված հեղափոխողները:** PPG անդամները հանրային քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքական գիտությունների բնագավառում միջազգայնորեն ճանաչված առաջավոր փորձագետներ են և մասնակցում են դրամաշնորհային ֆինանսավորմամբ իրականացվող բազմաթիվ հետազոտական նախագծերի: Խումբը բազմաթիվ հետազոտություններում սերտորեն աշխատում է Լոնդոնի տնտեսագիտական համալսարանի մի շարք այլ ստորաբաժանումների, ինչպես նաև Օքսֆորդի վիրտուալ ինստիտուտի հետ: Ի լրումն՝ զարգացնում է կապեր Լոնդոնի, Մեծ Բրիտանիայի և Եվրոպայի այլ առաջավոր համալսարանների ակադեմիական փորձագետների հետ՝ փորձ անելով որոշակի հարցերում ներգրավել առանձին մասնագետների: Խորհրդարանական պատասխանատվության որոշ առաջնակարգ աշխատանքներում, Մեծ Բրիտանիայում կենտրոնական կառավարության կարևոր գործադիր որոշումները կայացնում են խմբի անդամները:

Խմբի ղեկավար Պատրիկ Դանլիվին LSE-ի քաղաքագիտության և հանրային քաղաքականության պրոֆեսոր է և, առահասարակ, խմբի ան-

<sup>3</sup> <http://www.lse.ac.uk/government/research/resgroups/LSEPublicPolicy/aboutThePublicPolicyGroup.aspx>

դամների մեծամասնությունը LSE-ի աշխատակազմից են (հիմնական աշխատակազմի 9 անդամներից 6-ը LSE-ի տարբեր բաժանմունքների աշխատակիցներ են, 1-ը՝ LSE-ի նախկին աշխատակից, միայն 2-ը՝ LSE-ին չառնչվող անձինք):

Խումբը հետազոտություններ իրականացնելիս նաև համագործակցում է այլ համալսարանների հետազոտողների հետ և այժմ ունի ասոցացված 27 հետազոտող: Ինչպես մշտական աշխատակազմի անդամները, այնպես էլ ասոցացված հետազոտողները կա՛մ դասախոսներ են (պրոֆեսորներ), կա՛մ դոկտորականը պաշտպանելու փուլում են:

**Հրապարակումներ:** PPG-ն հրապարակում է գրքեր, մենագրություններ, հոդվածներ: Մենագրությունները, սովորաբար, հրապարակվում են տարին մեկ, և որպես հեղինակ հենց նշվում է PPG-ն: Իսկ PPG-ի թիմի անդամների և ասոցացված անդամների գրքերը նույնպես մեծ հաճախականությամբ չեն հրապարակվում (տարին մեկ կամ երկու անգամ) և որպես հեղինակ նշվում են հենց գրքի հեղինակները, այլ ոչ PPG-ն: PPG-ն հանդես է գալիս նաև LSE-ի չորս բլոգների՝ Բրիտանական քաղաքագիտության և քաղաքականության, Սոցիալական գիտությունների ազդեցության, Եվրոպական քաղաքագիտության և քաղաքականության, LSE-ի գրքերի գրախոսության անունից, որոնք համախմբում են ակադեմիկոսների, քաղաքական գործիչների, վերլուծաբանների, որպեսզի բարձրորակ հրապարակումների միջոցով աջակցեն սոցիալական գիտություններին: Բրիտանական քաղաքագիտության և քաղաքականության բլոգն ամեն օր հրապարակում է հոդվածներ, որոնց նպատակը հանրության շրջանում սոցիալական գիտությունների վերաբերյալ հետաքրքրության բարձրացումն է, ներքին (համալսարանի) և արտաքին փորձագետների կարծիքների և գաղափարների փոխանակման հեշտացումը<sup>4</sup>:

Սոցիալական գիտությունների ազդեցության բլոգը կարևոր ուղենիշ է հետազոտողների, ուսանողների, ուղեղային կենտրոնների, կառավարության և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են սոցիալական գիտությունների վրա գիտական աշխատանքների առավելագույն ազդեցությամբ<sup>5</sup>:

LSE-ի գրքերի գրախոսության բլոգը, որի շաբաթական այցելուների թիվը գերազանցում է 6000-ը, ամեն օր հրապարակում է գրախոսություններ սոցիալական գիտությունների բնագավառի ողջ շրջանակի գիտական գրքերի վերաբերյալ<sup>6</sup>:

Եվրոպական քաղաքագիտության և քաղաքականության բլոգի նպատակը հանրության շրջանում սոցիալական գիտությունների վերաբերյալ հե-

<sup>4</sup> <http://blogs.lse.ac.uk/politicsandpolicy/british-politics-and-policy-at-lse>

<sup>5</sup> <http://blogs.lse.ac.uk/impactofsocialsciences/about-the-blog/>

<sup>6</sup> <http://blogs.lse.ac.uk/lseviewofbooks/about-lserb/>

տաքրքրության բարձրացումն է՝ եվրոպական կառավարման և քաղաքականության համատեքստում<sup>7</sup>:

PPG-ն տարեկան հաշվետվություններ չի հրատարակում, չկան նաև նրա ֆինանսական ռեսուրսների գոյացման և բաշխման վերաբերյալ այլ տվյալներ՝ ներառյալ PPG-ում հետազոտողների աշխատավարձի վերաբերյալ: LSE-ում աշխատավարձերը սկսում են տարեկան 20.000 ֆունտից մինչև 90.000 ֆունտ<sup>8</sup>, իսկ հետազոտողների համար տարեկան մոտ 30.000–40.000 ֆունտ<sup>9</sup>:

**PPG-ի ներկայացվածությունն համացանցում:** Կայքը ներկառուցված է LSE-ի կայքում՝

<http://www.lse.ac.uk/government/research/resgroups/LSEPublicPolicy/Home.aspx>:

Այստեղ հետազոտությունների բաժնի միջոցով կարելի է մուտք գործել PPG-ի էջ, որը տեղեկություններ է պարունակում PPG-ի, նրա աշխատակազմի և ասոցացված հետազոտողների, սեմինարների, հրատարակումների, նախագծերի և հետազոտությունների վերաբերյալ: Սակայն կայքի թարմացումներն այդքան էլ հաճախ չեն կատարվում (օրինակ՝ հրատարակումների էջում վերջին թարմացումները կատարվել են 2012 թ. նոյեմբերին, հետազոտությունների բաժնում 2012 թ. ապրիլին) և երբեմն կրում են ձևական բնույթ (օրինակ՝ հետազոտական թեմաներ ու հետազոտություններ և նախագծեր բաժինները նույն տեղեկություններն են պարունակում, թեև դրանք առանձնացված են, իսկ այդ երկու բաժիններում զետեղված ամբողջ տեղեկատվությունը ընդամենը մեկ ընթացիկ հետազոտության մասին է):

## 1.2 | Սթենֆորդի համալսարանի Հուվերի ինստիտուտ

Հուվերի ինստիտուտը ամերիկյան հանրային պահպանողական քաղաքականության ուղեղային կենտրոն է, գտնվում է Սթենֆորդի համալսարանում, Կալիֆորնիայում: Հուվերի ինստիտուտը Սթենֆորդի համալսարանի մի մասն է՝ տեղակայված համալսարանի տարածքում:

1919 թ. Հերբերտ Հուվերը՝ նորաստեղծ Սթենֆորդի համալսարանի առաջին ուսանողներից մեկը, որ հետագայում դարձավ ԱՄՆ-ի 31-րդ նախագահը, զգալի միջոցներ տրամադրեց Սթենֆորդի համալսարանին՝ Առաջին համաշխարհային պատերազմին նվիրված գրադարանի և նյութերի պահոցի ստեղծման համար<sup>10</sup>: Հետագայում գրադարանը համալրվեց և կոչվեց «Հու-

<sup>7</sup> <http://blogs.lse.ac.uk/europpblog/about-europp/>

<sup>8</sup> [https://atsv7.wcn.co.uk/search\\_engine/jobs.cgi](https://atsv7.wcn.co.uk/search_engine/jobs.cgi)

<sup>9</sup> [https://atsv7.wcn.co.uk/search\\_engine/jobs.cgi](https://atsv7.wcn.co.uk/search_engine/jobs.cgi)

<sup>10</sup> <http://www.hoover.org/about/herbert-hoover>

վերի պատերազմի գրադարան», դարձավ երկու համաշխարհային պատերազմներին վերաբերող պատմական նյութերի աշխարհի խոշորագույն պահոցներից մեկը: 1946 թ. սկսած Հուվերի պատերազմի գրադարանի օրակարգը զգալիորեն ընդլայնվեց՝ ընդգրկելով հետազոտական գործունեությունը: Ժամանակի ընթացքում գրադարանը վերածվեց քաղաքականության և տնտեսության ոլորտում երկարաժամկետ վերլուծական ծրագրերով զբաղվող կարևոր հետազոտական կենտրոնի, վերանվանվեց «Պատերազմի, հեղափոխության և խաղաղության Հուվերի ինստիտուտ»:

Ինստիտուտի առաքելությունն ուրվագծված է նրա հիմնարար *սկզբունքներում*, այն է՝ անձնական, տնտեսական և քաղաքական ազատություն, մասնավոր ձեռնարկատիրություն, ներկայացուցչական կառավարում և ամերիկյան քաղաքական համակարգի անվտանգություն: Հավաքելով գիտելիքներ, ստեղծելով և տարածելով գաղափարներ՝ ինստիտուտը ձգտում է ապահովել և պաշտպանել խաղաղությունը, բարելավել կյանքի պայմանները և սահմանափակել կառավարության միջամտությունը մարդկանց կյանքին:

Հուվերի ինստիտուտը այն եզակի ուղեղային կենտրոններից է, որն ամբողջությամբ ինտեգրված է համալսարանական կառուցվածքում: Հուվերի աշխատակիցները պաշտոնապես ներառված են Սթենֆորդի գիտական անձնակազմում<sup>11</sup>: Հուվերի բազմաթիվ գիտաշխատողներ համատեղությամբ աշխատում են և՛ որպես Հուվերի գիտաշխատող, և՛ որպես Սթենֆորդի պրոֆեսոր: Այս դեպքում Համալսարանն ու Ինստիտուտը կիսում են պրոֆեսոր/գիտաշխատողի աշխատավարձի ծախսերը: Իրա հետ մեկտեղ՝ Հուվերի ֆինանսները Սթենֆորդի ֆինանսներն են, Հուվերի հաշվեկշիռը Սթենֆորդի հաշվեկշիռն է: Այնուամենայնիվ, Հուվերի ինստիտուտը գործում է համալսարանի կառավարման համակարգից անկախ<sup>12</sup>, ունի Հոգաբարձուների իր խորհուրդը, որն էլ կառավարում է ինստիտուտի նպատակային կապիտալը (endowments):

Հուվերը ֆինանսավորվում է բացառապես մասնավոր միջոցներից և չի կատարում պետական պատվերներ: Ոչ պետական կազմակերպությունների և հիմնադրամների հետ մեկտեղ Հուվերի ինստիտուտի հովանավորներ են առանձին ֆիզիկական անձինք, սակայն, առաջին հերթին, դրանք ԱՄՆ-ի մասնավոր հատվածի ընկերություններն են: Իրենց հերթին, ԱՄՆ-ի առաջատար կորպորացիները միշտ կարող են հույս դնել հուվերյան որակյալ հետազոտության վրա, որ օպերատիվ կերպով մշակում են բարձրակարգ գիտաշխատողները (resident fellows):


<sup>11</sup> <http://www.stanford.edu/group/peace/hover/HooverArguments.html>

<sup>12</sup> [http://www.situation.ru/app/j\\_art\\_377.htm](http://www.situation.ru/app/j_art_377.htm)

Ինստիտուտը գոյատևում է երկու հիմնական ռեսուրսների, այսպես կոչված՝ **նպատակային դրամագլխային հիմնադրամների** (endowment payout) և **ծախսելի նվիրատվությունների** (expendable gifts) շնորհիվ:

Նպատակային դրամագլխային հիմնադրամները՝ *Endowment* (այսուհետ՝ նպատակային կապիտալ) ոչ առևտրային կազմակերպությանը բարեգործական նպատակներով տրվող այն գումարն է, որից օգտագործվում է միայն «եկամուտը», մինչդեռ «մայր գումարը» մնում է անձեռնմխելի (Հուլիանի ինստիտուտում սովորաբար ծախսվում է մայր գումարի 6 տոկոսը): Միջազգային պրակտիկայում նպատակային կապիտալի մեծամասնությունը ստեղծվում է անժամկետ: Նպատակային դրամագլխային հիմնադրամները ապահովում են ինստիտուտի ֆինանսական կայունությունը:

Ծախսելի նվիրատվությունները բարեգործական նպատակներով տրվող այն գումարն է, որն ամբողջությամբ ծախսվում է դոնորի նախատեսած ուղղությամբ: Ծախսելի նվիրատվության առավելություննայն է, որ դոնորը հնարավորություն ունի անմիջապես ազդելու որոշակի հետազոտողի կամ հետազոտության ոլորտի վրա:




**Գծապատկեր 1**

**2010 թ. Հուլիանի ինստիտուտի բյուջեի եկամուտներ (մլն ԱՄՆ դոլար)**

Ըստ Հուլիանի ինստիտուտի 2010 թ. զեկույցի՝ նույն թվականի օգոստոսին Հուլիանի նպատակային կապիտալի շուկայական արժեքը գնահատվել է 342 մլն դոլար (2008 թ. 462 մլն դոլար. կապիտալի շուկայական արժեքի նման անկումը պայմանավորված էր ֆինանսական ճգնաժամով), իսկ տարե-

կան բյուջեն՝ 39,426 մլն դոլար<sup>13</sup>: 2009–2010 ֆիսկալ տարում (վերջանում է 2010 թ. օգոստոսի 31-ին) ծախսերի նվիրատվությունները կազմել են 17,7 միլիոն դոլար, իսկ նպատակային վճարումները՝ 20,6 միլիոն:

2009–10 ֆիսկալ տարում բազային բյուջեի ծախսերը կազմել են 37,1 միլիոն դոլար:



**Գծապատկեր 2**

**2010 թ. Հուլիսի բյուջետային ծախսեր (մլն ԱՄՆ դոլար)**

Հուլիսի ինստիտուտի դոնորների անունները չեն հրապարակվում, սակայն ըստ որոշակի աղբյուրների՝ ներկայիս դոնորների ոչ ամբողջական ցուցակը ներառում է հետևյալ կազմակերպությունները<sup>14</sup>

- Archer Daniels Midland հիմնադրամ
- Exxon կրթական հիմնադրամ
- General Motors հիմնադրամ
- Procter & Gamble ֆոնդ
- ARCO
- Ford Motor Company հիմնադրամ
- Boeing- McDonnell հիմնադրամ
- Chrysler կորպորացիայի ֆոնդ
- J.P. Morgan բարեգործական տրաստ
- Transamerica հիմնադրամ

<sup>13</sup> HOOVER INSTITUTION 2010 Report, page 38.

<sup>14</sup> <http://www.economicexpert.com/a/Hoover:Institution.htm>

Ցանկացած մեծության նվիրատվություն Հուվերի ինստիտուտի հիմնադրամը ողջունում և խրախուսում է: Մինչև 250 դոլար նվիրատվություն կատարող դոնորները ստանում են ինստիտուտի տեղեկատվական ամսագիրը (The newsletter), իսկ 10 000 դոլար և ավելի նվիրատվություն կատարողները ստանում են դոնորներին առաջարկվող բոլոր հրապարակումները, ձեռք են բերում Հուվերի խորհրդին (բաղկացած ամենից շատ աջակցություն ցուցաբերող դոնորներից) անդամակցելու իրավունք, ինչպես նաև գիտնականների, մասնագետների հետ փոխազդեցության լայն հնարավորություններ: Ինչ վերաբերում է առանձին հետազոտություններին հատկացվող ֆինանսական միջոցների և աշխատակիցների վարձատրության չափին, ապա ըստ ինստիտուտի ֆինանսական մենեջեր Կարեն Վայսի, այդ տեղեկությունը խիստ գաղտնի է և չի հրապարակվում:

Հուվերի ինստիտուտը զբաղվում է գերազանցապես երկարաժամկետ ծրագրերով: Այստեղ մշակված հայեցակարգերից, որոնք մեծ (երբեմն բեկումնային) ազդեցություն են ունեցել ԱՄՆ-ի քաղաքականության վրա, կարելի է նշել Strategic Defense Initiative (Ռազմավարական պաշտպանական նախաձեռնություն) (SDI)-ը, որը համաշխարհային ճանաչում է ստացել հովիվության «աստղային պատերազմներ» անվամբ<sup>15</sup>: Մշակել է հուվերյան գիտաշխատող Էդվարդ Տելլերը, նախատեսվում էր տիեզերական արբանյակային պաշտպանական համակարգի ստեղծում՝ թշնամու հրթիռային ուժերի միջուկային հարձակումից ԱՄՆ պաշտպանության համար: Սակայն դրա իրականացումն այնպիսի ահեղի միջոցներ պահանջեց, որ նույնիսկ ԱՄՆ-ի նման գերտերության ուժերից վեր էր: Վերջերս նորից այդ նախագծի շուրջ քննարկումներ էին իրականացվում, սակայն դրանք ավարտվեցին առողջ քանակության հաղթանակով:

Հուվերի ինստիտուտի մյուս հայտնի նախագծերն են «Թմրանյութերի օգտագործման ապաքրեականացման համալիր միջոցառումները» (նախաձեռնող՝ Միլտոն Ֆրիդման), «ԱՄՆ-ի հարկային համակարգի պարզեցման առաջարկը» (Չարլզ Մակլյուր) և այլն:

Հուվերյան համընդհանուր ոճը տարբերվում է ազատականության սկզբունքների հետևողական պահպանմամբ, տնտեսության և հասարակական կյանքի վրա պետության ազդեցության առավելագույն նվազեցման պահանջով (այդ տրամաբանության շրջանակներում մարքսիզմը մերժվում է)<sup>16</sup>:

Զբաղված լինելով բարձր որակ և մեծաքանակ հետազոտություններով՝ Հուվերի գիտնականները ներկայումս պարբերաբար մասնակցում են ընթացիկ պետական քաղաքականության հարցերի քննարկմանը՝ հանդես

<sup>15</sup> [http://www.situation.ru/app/j\\_art\\_377.htm](http://www.situation.ru/app/j_art_377.htm)

<sup>16</sup> Hoover Institution 2010 Report. page 5.

գալով նաև հեռուստատեսային և ռադիոհաղորդումներում, ներկա գտնվելով կառավարական լսումներին, թողարկում արժեքավոր գրքեր, հոդվածներ, գիտական հետազոտություններ և էսսեներ:

Հուլիերի հետազոտական ծրագրերի հզորությունը պայմանավորված է գիտական աշխատակազմով, որը ձգտում է անդրադառնալ «մեծ պատկերին» (տվյալ իրավիճակին վերաբերող ամենակարևոր փաստերին և իրավիճակի ազդեցությանը այլ երևույթների վրա), առաջարկում է գործադրելի և ներքին հետևողական ազդեցության գաղափարներ:

Հուլիերի գիտնականները արժանացել են մի շարք հեղինակավոր մրցանակների, այդ թվում Նոբելյան մրցանակի (Թոմաս Սարջենտ, Մայքլ Սպենս, Դուգլաս Նորտ, Հերի Բեքեր), Գիտությունների ազգային մեդալի, Ազատության նախագահական մեդալի և այլն: Ինստիտուտի անդամներն են այնպիսի ազդեցիկ քաղաքական գործիչներ, ինչպիսիք են Կոնդոլիզա Ռայսը, Ջորջ Շուլցը, Հենրի Բիսինջերը, Դարոն Աջեմոլուն և այլոք: Հուլիերի ինստիտուտի պատվավոր անդամ են եղել Մարգարետ Թետչերը, Միլտոն Ֆրիդմանը: Հուլիերի գիտական աշխատակիցների մեծամասնությունն ունի պրոֆեսորի կոչում, և նրանցից շատերը համատեղությամբ աշխատում են նաև աշխարհի լավագույն մյուս հետազոտական կենտրոններում (օրինակ՝ Ջեյմս Գուդբայը (James Goodby), Չարլզ Էբինգերը (Charles Ebinger) նաև Բրուքլինգսի ինստիտուտի գիտական աշխատակիցներ են):

Ներկայումս ինստիտուտում մշտապես աշխատում է 65 գիտաշխատող: Դրանք, առաջին հերթին, փորձագետներ են տնտեսագիտության, իրավունքի, պատմության, կրթության և սոցիոլոգիայի բնագավառում: Հուլիերն ունի ինչպես հիմնական, այնպես էլ հրավիրված գիտաշխատողներ: 1971 թ.-ից գործում է **Ազգային գիտաշխատողների ծրագիրը**, որը հնարավորություն է տալիս գիտությունների դոկտորի կամ համարժեք կոչում ունեցող գիտնականներին միանալու Հուլիերի հրավիրված գիտաշխատողների կազմին: Ընդ որում, գիտնականը պետք է տվյալ պահին նշանակված լինի որևէ գիտական պաշտոնում: Նախապատվությունը տրվում է այն թեկնածուներին, որոնք դոկտորի կոչում ստացել են 3–7 տարի առաջ:

Բացի անհատական հետազոտություններից, ինստիտուտում ձևավորվել են նաև 11 գիտական խումբ՝ աշխատանքային և օպերատիվ մարտավարական խմբեր, որոնց խնդիրն է կենտրոնանալ ներկայիս քաղաքական հարցերի վրա՝ ինստիտուտի սահմանած հետազոտական առաջնահերթությունների շրջանակներում: Դրանք կազմակերպվում, ձևավորվում են որպես «վիրտուալ ֆակուլտետներ»՝ բաղկացած Սթենֆորդի համալսարանի գիտնականներից և Հուլիերի գիտաշխատողներից, ինչպես նաև այլ առաջատար համալսարանների և հետազոտական կենտրոնների գիտնականներից, որոնք բոլորն էլ աշխատում են համատեղ որոշված թեմաների և նախագծերի շուրջ:



Տասնմեկ խմբերն ուսումնասիրում են տնտեսական, քաղաքական, իրավական, պատմական և կրթական քաղաքականության հարցերի լայն կրթական ոլորտների շրջանակներ<sup>17</sup>: Դրանք ձևավորվել և գործում են՝ ունենալով հստակ դեր ԱՄՆ-ի զարգացման բախտորոշ փուլերում: Գրքերի, հոդվածների, բլոգների, լրատվական ելույթների և այլ հրապարակումների հոսքը բոլոր ժամանակներում եղել է բարձր: Սկսած 2007 թ., երբ այս խմբերից շատերը սկսեցին իրենց գործունեությունը՝ արդեն հրապարակվել է 40 գիրք և հոդված, առաջիկա երկու տարվա ընթացքում նախատեսվում է ավարտին հասցնել ևս 40 նախագիծ:

Ամեն օր կարելի է հանդիպել Հուվերի գիտնականների հրապարակած գիտական կարծիքների: Հուվերի ինստիտուտի հրատարակչությունը (Hoover Institution Press) թողարկում է տարաբնույթ նյութեր, ներառյալ եռամսյակային Hoover Digest, Education Next (լրացուցիչ հովանավորություն է ստանում նաև Հարվարդի համալսարանի և Thomas B. Fordham հիմնադրամից)<sup>18</sup>, China Leadership Monitor և Defining Ideas պարբերականները: Hoover Institution Press-ը 2 ամիսը մեկ հրապարակում է նաև Policy Review-ն, որը 2001 թ. Հուվերը ձեռք բերեց Ժառանգություն հիմնադրամից: Ամեն շաբաթ հրատարակվում է Հուվերի ինստիտուտի տեղեկագիրը, իսկ 2013 թ. ապրիլից լույս է տեսնում նոր առցանց ամսագիր՝ Strategika-ն, որը ներկայացնում է ազգային անվտանգության ընթացիկ հարցերի վերաբերյալ կարծիքներ և վերլուծություններ, լույս է տեսնում մի քանի շաբաթը մեկ՝ «Ժամանակակից հակամարտության ռազմական պատմություն» աշխատանքային խմբի ջանքերով:

**Ինստիտուտի ներկայացվածությունը համացանցում:** Հուվերի ինստիտուտը Facebook-ում, Twitter-ում, Youtube-ում և Scribd-ում ունի պաշտոնական էջ, նաև սեփական համացանցային կայքէջ՝ <http://www.hoover.org/>, որը պարունակում է հարուստ տեղեկատվություն ինստիտուտի գործունեության վերաբերյալ: Կայքը բաղկացած է հետևյալ 8 բաժիններից՝

1. *Հուվերի մասին.* պարունակում է ընդհանուր տեղեկություններ ինստիտուտի վերաբերյալ, բնութագրում է նրա առաքելությունը, կա ենթաբաժին՝ նվիրված Հերբերտ Հուվերին, առկա են կոնտակտային տվյալները, շարադրված է նվիրատվություն իրականացնելու կարգը, գետեղված են ինստիտուտի գործունեության վերաբերյալ զեկույցներ:
2. *Հետազոտություններ.* տեղեկատվություն է տրվում հետազոտությունների վերաբերյալ, ներկայացված են աշխատանքային և օպերատիվ-տակտիկական խմբերի հետազոտությունները, գիտական

<sup>17</sup> Աշխատանքային և տակտիկական խմբերի ամբողջական ցանկը ներկայացված է հավելվածում:

<sup>18</sup> [http://www.edweek.org/media/ednext\\_info.pdf](http://www.edweek.org/media/ednext_info.pdf)

աշխատակիցների մեկնաբանությունները, ինստիտուտի այլ ծրագրերն ու նախագծերը:

3. *Աշխատանքային և օպերատիվ-տրակտիկական խմբեր.* այստեղ ներկայացվում են գիտական խմբերը, դրանց անդամները, իրականացված հետազոտությունները և հրապարակված նյութերը:
4. *Գրադարան և արխիվ:*
5. *Հրատարակումներ:*
6. *Աուդիո, Վիդեո և բլոգներ:*
7. *Նորություններ:*
8. *Գիտական աշխատակիցներ.* ներառում է տեղեկատվություն հիմնական (ռեզիդենտ) և հրավիրյալ գիտական աշխատակիցների վերաբերյալ, ինչպես նաև ինստիտուտին անդամակցելու կարգը:

### 1.3 | Կոլումբիայի համալսարանի Մոլորակի ինստիտուտ

#### *...Լուծումներ կայուն զարգացման համար*

Մոլորակի ինստիտուտը (The Earth Institute) ստեղծվել է 1995 թ. Կոլումբիայի համալսարանում: Միավորելով գիտական հետազոտությունները, կրթությունը և գործնական լուծումները՝ Կոլումբիայի համալսարանի Մոլորակի ինստիտուտը աշխատում է աշխարհին օգնել հասնելու կայուն զարգացման:

Պրոֆեսոր Ջ. Սաքսի գլխավորությամբ՝ ինստիտուտը ներառում է ավելի քան 30 հետազոտական կենտրոններ և միավորում 850 գիտնականների, գիտական աշխատողների, դասախոսների և ուսանողների:

Մոլորակի ինստիտուտի փորձագետները միասնաբար աշխատում են գիտական շրջանակների, կորպորացիաների, կառավարական հաստատությունների, ոչ առևտրային կազմակերպությունների և անհատների հետ: Նրանք մատուցում են խորհրդատվություն ազգային կառավարություններին և ՄԱԿ-ին կայուն զարգացման և Հազարամյակի զարգացման նպատակներին առնչվող հարցերում, ձևավորում են հիմնարար գիտությունների և կայուն զարգացման բնագավառի ապագա առաջնորդներ<sup>19</sup>:

Սաքսը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՋՆ) հատուկ խորհրդականն է, եղել է ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նախագծի ղեկավարը 2002–2006 թթ.-ին: Մոլորակի ինստիտուտի ֆակուլտետը ՀՋՆ-ի մի քանի նպատակային խմբեր է առաջնորդում

<sup>19</sup> <http://www.earth.columbia.edu/articles/view/1791>

և օգտագործում ՀԶՆ նպատակները՝ իրենց սեփական հետազոտական նախագծերը ձևավորելու համար<sup>20</sup>:

Մոլորակի ինստիտուտի *հետազոտության հիմնական ուղղություններն են՝*

- Ջրային ռեսուրսներ,
- Կլիմա և հասարակություն,
- Էներգետիկա,
- Ուրբանիզացում,
- Տարերային աղետներ,
- Գլոբալ առողջապահություն,
- Աղքատություն,
- Մնունդ և բնապահպանություն,
- Էկոհամակարգի պահպանում և մշտադիտարկում:

**Մոլորակի ինստիտուտի կառուցվածքը:** *Մոլորակի ինստիտուտի փնտրիչությունը*, ուղղորդում է ինստիտուտի գործունեության օրակարգը և ապահովում իր ռազմավարական առաջնահերթությունների մտավոր և կազմակերպական ղեկավարումը<sup>21</sup>:

*Արդարքին խորհրդարկական խորհուրդը* մշակում է գիտության, հանրային քաղաքականության և դասավանդման ոլորտներում առկա առաջնայնություններին համապատասխան զարգացման ուղղություններ: Խորհուրդն ամեն տարի հանդիպում է կազմակերպում Նյու-Յորքում: Խորհրդի անդամներից են Քեննեթ Էրոուն, Բոնն, Բարրի Բլումը, Ջարեդ Դայմոնդը, Ջորջ Սորոսը և այլք (ընդամենը՝ 15 անդամ):

*Մոլորակի ինստիտուտի առաջնորդության խորհուրդը* կազմված է կայուն զարգացման մասնագետներից, նորարարական ու ստեղծագործ մտածողներից և գործարարության առաջատարներից, որոնք աջակցում են ՄԻ-ի նպատակներին՝ միավորելով վերջինիս ռեսուրսներն ու իրենց գործարար կապերը Նյու Յորքում և դրա սահմաններից դուրս:

*Մոլորակի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը* պատասխանատու է կայուն զարգացման ոլորտում հետազոտությունների իրականացման համար: Այս խումբը ղեկավարում և ակադեմիական տեսանկյունից կառավարում է Մոլորակի ինստիտուտի հետազոտությունների, գիտական և կիրառական ծրագրերի ապագա հնարավոր ուղղությունները:

Խումբը (36 հոգի) բաղկացած է Մոլորակի ինստիտուտի պատվավոր պրոֆեսորներից և Կոլումբիայի համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից, որոնց նշանակում է Կոլումբիայի համալսարան:

<sup>20</sup> [http://en.wikipedia.org/wiki/The\\_Earth\\_Institute](http://en.wikipedia.org/wiki/The_Earth_Institute)

<sup>21</sup> <http://www.earth.columbia.edu/articles/view/3051>

նի ռեկտորը: Խմբի կազմում մշտական անդամները կրում են հետազոտական, կրթական և կիրառական ծրագրերի իրականացման համար գլխավոր պատասխանատվությունը, իսկ ասոցացված անդամներն աջակցում են մշտական անդամներին՝ առանց աշխատանքային պայմանագրի և վարձատրության՝ իրենց ուսումնասիրությունների թեմաներին համապատասխան: Խմբի վերահսկողության շրջանակներն են՝ ՄԻ-ի ինտելեկտուալ առաջնորդում (ուղղորդում), ուսումնական ծրագրերի մշակում, նոր նշանակումներ և հրավիրյալ անդամներ, հատուկ ծրագրերի վերաբերյալ ցուցումներ, սեմինարների և գիտաժողովների անցկացում, ՄԻ-ի ակադեմիական գործունեության համար բնակավայրի ստեղծում:

Խումբը բաղկացած է 6 կոմիտեից՝

- Ակադեմիական նշանակումներ իրականացնող (Academic Appointments Committee),
- Կրթական (Education Committee),
- Գործադիր (Executive Committee),
- Խմբի զարգացման (Faculty Development Committee),
- Կիրառական (Practice Committee),
- Բաժինների վերանայման (Unit Review Committee)<sup>22</sup>:

**Ներագրության կենտրոններն ու նախագծերը:** Մոլորակի ինստիտուտը ներառում է հետազոտական 18 տորաբաժանում, 13 նախագիծ, 5 ստորաբաժանում, որոնք հիմնադրել են Մոլորակի ինստիտուտը և մեկ այլ միավոր համատեղ և 6 մասնաճյուղ ու կոնսորցիում (Մոլորակի ինստիտուտը հարում է վերջիններիս տեսակետներին կամ սերտորեն կապված է դրանց հետ)<sup>23</sup>:

Ծրագրերից հարկ է առանձնացնել ՄԻ-ի *Հիմնասինդրային նախաձեռնություն (Cross-Cutting Initiative (CCI))* ծրագիրը, որի նպատակն է աջակցել կայուն զարգացման բնագավառում առկա բարդ խնդիրների ուսումնասիրությանը, որոնք պահանջում են տարբեր գիտաճյուղերի միավորում, խաչաձևում: CCI-ն ուղղորդում է նախնական ֆինանսավորմանն ուղղված ներդրումներն ու կայուն զարգացմանը նվիրված սեմինարները<sup>24</sup>: Մյուս ծրագիրը *Մոլորակի Կլիմայի և*, որը ՄԻ-ի հիմնական կիրառական գործիքն է: Մոլորակի կլիմայի աշխատանքի մեծ մասը ածանցյալ է ՄԻ-ի, մասնավորապես՝ CCI-ի ընթացիկ նախագծերից, որոնց շրջանակներում մշակվել են միջոցառումներ՝ պատրաստ այս կամ այն ոլորտում կիրառվելու:

<sup>22</sup> Bylaws of the Earth Institute Faculty proposed by the Academic Committee of the Earth Institute for approval by the Provost Peter Schlosser, Chair, Academic Committee; June 3, 2009, pp 4-8.

<sup>23</sup> Մոլորակի ինստիտուտի հետազոտական կենտրոնների, ծրագրերի, համատեղ միավորումների և մասնաճյուղերի ցանկը ներկայացված է հավելվածում:

<sup>24</sup> <http://www.earth.columbia.edu/articles/view/2829>

**Կրթական և գիտական ծրագրերը:**

- Մարի Թարփի (Mary Tharp) անվան կրթաթոշակային ծրագիրը (ընկերակցություն):
- Շնորհվում է ակնառու կին գիտնականներին: Եռամսյա ծրագիրն անցկացվում է ՄԻ-ի ցանկացած հետազոտական միավորում, բաժանմունքում կամ մասնաճյուղում: Սովորաբար, տարեկան շնորհվում է 2–3 մրցանակ: Այս հեղինակավոր ծրագրերը շնորհվում են Կոլումբիայի համալսարանից դուրս աշխատող գիտնականներին՝ վերջիններիս ու համալսարանի միջև համագործակցություն ապահովելու համար:
- Բնապահպանական և շրջակա միջավայրի դաշտային հետազոտությունների միջոցով իրականացվող ուսուցման ծրագիր՝ LEEFS (The Learning Through Ecology And Environmental Field Studies Program):
- Այս ծրագիրն ապահովում է Կոլումբիայի համալսարանի ավարտական ուսանողների և Նյու-Յորքի հանրային դպրոցների բնագիտական առարկաների ուսուցիչների համագործակցությունը: Ուսանողները Գիտությունների ազգային հիմնադրամից ստանում են GK-12 կրթաթոշակային ծրագրեր, որոնք ներառում են կրթաթոշակ ու աջակցություն ուսումնական գործընթացին: Փոխարենը՝ ուսանողներից յուրաքանչյուրն աշխատում է գործընկեր դպրոցներից մեկի հետ՝ բարձրացնելով բնագիտական առարկաների դասավանդման որակը: Ծրագրի մասնակից ուսուցիչները ստանում են կրթաթոշակ և մասնագիտական զարգացում՝ Շրջակա միջավայրի հետազոտությունների և պահպանման կենտրոնի, Լամոն-Դոհերթիի աստղադիտարանի կամ Կոլումբիայի ամառային հետազոտական ծրագրի միջոցով: LEEFS-ը ֆինանսավորվում է Գիտությունների ազգային հիմնադրամի կրթության և մարդկային ռեսուրսների վարչության տված 3.1 մլն դոլարի, 5 տարի ժամկետով դրամաշնորհի միջոցով<sup>25</sup>:
- Հետբուհական կրթաթոշակային /Postdoctoral Fellow/ ծրագիր: Ծրագիրը տևում է 24 ամիս: Մասնակիցները ստանում են տարեկան շուրջ 48,000 դոլար վարձատրություն: Նրանց նաև տրվում է 12,000 դոլարի չափով հետազոտական կրթաթոշակ՝ հատուցելու համար ծրագրի հետ կապված ծախսերը: Կրթաթոշակառուները համարվում են Կոլումբիայի համալսարանի հետազոտությունների աշխատակից, ուստի իրավունք ունեն օգտվելու լրիվ դրույքով աշ-

<sup>25</sup> <http://leefs.ei.columbia.edu/index.html>

խատողներին հասանելի բժշկական ապահովագրությունից և այլ արտոնություններից: Կրթաթոշակառուներն իրենք են ընտրում ՄԻ-ի որևէ ստորաբաժանում և իրենց ղեկավարին, ինչպես նաև ազատ են հետազոտության թեմայի ընտրության մեջ:

- Հետազոտական պրակտիկան /assistantship/ հնարավորություն է տալիս Կոլումբիայի համալսարանի բակալավրիատի ուսանողներին մասնակցելու ՄԻ-ի մի շարք ծրագրերի շրջանակներում իրականացվող գիտական և կիրառական աշխատանքներին: Աշխատանքներն իրականացվում են պրոֆեսորադասախոսական կազմի հսկողության ներքո, և բոլոր հաստիքները վճարվում են հետևյալ կարգով. ոչ լրիվ աշխատաքային օրվա համար նախատեսվում է 10-շաբաթյա աշխատանք, շաբաթական 10–15 ժամով, 15 դոլար/ժամ վարձատրությամբ, իսկ լրիվ աշխատանքային զբաղվածության համար շաբաթական 35 ժամ, դարձյալ 15 դոլար/ժամ վարձատրությամբ: Պրակտիկան անցկացվում է աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում՝ ամեն մեկում առաջարկելով 12 պրակտիկա:
- Փորձառության /Internship/ միջոցով բակալավրատի, մագիստրատուրայի և հետբուհական /PhD/ ուսանողները կարող են մասնակցել ՄԻ-ի աշխատանքներին՝ վարչարարության, հաղորդակցության կամ հետազոտությունների ոլորտներում: Աշխատանքի և վարձատրության պայմանները նույնն են, ինչ հետազոտական պրակտիկայի ժամանակ:
- Ճանապարհորդական դրամաշնորհները: Ծրագիրը նախաձեռնվել է 2005 թ. նախատեսում է 750 ԱՄՆ դոլարի չափով միջոցների տրամադրում ինչպես անհատական, այնպես էլ խմբային ծրագրերի իրականացման համար:

Ամեն տարի գարնանը անցկացվում է ուսանողական հետազոտությունների ցուցադրություն, որին մասնակցում են ինչպես ՄԻ-ի, այնպես էլ Կոլումբիայի համալսարանի այն ուսանողները, որոնք հետազոտություններ են կատարել կայուն զարգացման և շրջակա միջավայրի թեմաներով:


**Ֆինանսավորում:** 2012 թ. ֆինանսական տարվա բյուջեում ծախսերը կազմել են 141,776 հազար ԱՄՆ դոլար, իսկ եկամուտները՝ 122,539 հազար ԱՄՆ դոլար:

Մասնավոր նվիրատվությունների շուրջ 45 տոկոսը բաժին է ընկնում տարբեր անհատների: ՄԻ-ն այժմ ընդգրկված է Կոլումբիայի համալսարանի 5 մլրդ դոլար արժեքով նախաձեռնության 300 մլն դոլարի չափով գործընթացին, որը կնպաստի կայուն զարգացման ոլորտում ինստիտուտի առաջա-

տար դերի ամրապնդմանն ու իրացմանը<sup>26</sup>: Նախաձեռնության ֆինանսավորման ուղղություններն են՝

- Նվիրատվություն /endowment/ 100 մլն ԱՄՆ դոլար արժեքով, որոնք ապահովում են պրոֆեսորների աշխատավարձերն ու դրամաշտրիկները և ֆինանսական աջակցություն ցուցաբերում հետազոտողներին:
- Ծառայություններ, ծավալը՝ 50 մլն ԱՄՆ դոլար, պետք է ուղղվեն ՄԻ-ի համար ժամանակակից շտաբ-բնակարաններ կառուցելուն:
- Նախագծեր և հետազոտություններ 150 մլն ԱՄՆ դոլար արժեքով: Տարբեր նախագծերի և հետազոտությունների ֆինանսավորումը հնարավորություն է ընձեռում տեսական գիտելիքներն ու պատկերացումները կիրառել աշխարհի տարբեր վայրերում՝ որոշակի միջոցառումների իրականացմամբ<sup>27</sup>:

Մոլորակի ինստիտուտի 2012 թ. ծախսերի և եկամուտների կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 3 և 4-ում:




### Գծապատկեր 3

Մոլորակի ինստիտուտի ծախսերի կառուցվածքը 2012 թ. ֆինանսական տարում<sup>28</sup>

<sup>26</sup> <http://issuu.com/earthinstitute/docs/donor2012?e=4098028/1419089>

<sup>27</sup> <http://www.earth.columbia.edu/articles/view/2544>

<sup>28</sup> The Earth Institute, Columbia University, 2012 Annual Donor Report, p 16.



Գծապատկեր 4

Մոլորակի ինստիտուտի եկամուտների կառուցվածքը 2012 թ. ֆինանսական տարում<sup>29</sup>

**Գործընկերները:** Իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու նպատակով ՄԻ-ին համագործակցում է մի շարք գործընկերների հետ, որոնք կազմում են ՄԻ-ի կորպորատիվ շրջանակը: Սրա միջոցով ՄԻ-ն նպատակ ունի ընդգրկել կայուն զարգացման ապահովման մեջ հետաքրքրված և դրան նվիրված կազմակերպություններին, որոնցից են՝ Deutsche Bank, Ericsson, GlaxoSmithKline, Nestle, PepsiCoInc և այլն<sup>30</sup>:

#### 1.4 Սթենֆորդի համալսարանի Միջազգային անվտանգության և համագործակցության կենտրոն

*Մենք հիմնվում ենք մեր վաղեմի համոզմունքի վրա, որ գիտելիքի, նոր գաղափարների, ինստիտուցիոնալ զարգացումների փոխանակումը կարող է նպաստել ավելի ապահով աշխարհ կառուցելու առաքելությանը.....*

Միջազգային անվտանգության և համագործակցության կենտրոնը (CISAC-Center For International Security And Cooperation) Սթենֆորդի համալսարանում գործող կենտրոններից է<sup>31</sup>: Կենտրոնի ծագումը կապված է վիետնամական պատերազմի ժամանակաշրջանի հետ: Հանդիպումներից մեկի

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>30</sup> Կորպորատիվ շրջանակում ընդգրկված գործընկերների ցանկը ներկայացված է հավելվածում:

<sup>31</sup> <http://cisac.stanford.edu/>



Ժամանակ քաղաքագետ Ջոն Լյուիսը (John Lewis), Սթենֆորդի համալսարանի գծային արագացուցչի կենտրոնի տնօրեն Վոլֆգանգ Պանոֆսկին (Wolfgang Panofsky) և Սթենֆորդի համալսարանի իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր Ջոն Բարտոնը (John Barton) եկան այն եզրակացության, որ ուսանողների մեծ մասը շատ քիչ պատկերացում ունի պատերազմների և անվտանգության քաղաքականության մասին: Վերոնշյալ գիտնականները որոշեցին հիմնել ուսումնական կենտրոն, որը հնարավորություն կտա տարբեր մասնագիտությունների տեր ուսանողներին ուսուցանել միջազգային անվտանգության կարևորությունը, ինչպես նաև հասկանալ, թե այդ ոլորտում ինչպես է ձևավորվում պետական քաղաքականությունը:

1970 թվականին կենտրոնի առաջին հետազոտական աշխատանքը՝ «Սպառազինությունների վերահսկում և զինաթափում», կենտրոնացած էր միջուկային զենքի և պայմանագրերի ու բանակցությունների միջոցով վերջինիս կիրառման կանխարգելմանը:

1973 թվականին «Ֆորդ» հիմնադրամը Սթենֆորդի համալսարանին դրամաշնորհ տրամադրեց միջազգային սպառազինությունների վերահսկման և դրան համապատասխան դասագրքի հրատարակման համար: «Միջազգային անվտանգության հիմնախնդիրներ» առարկան դարձավ համալսարանում դասավանդվող հիմնական առարկաներից մեկը: Մեկ տարի անց հիմնադրամը դարձյալ ֆինանսական միջոցներ տրամադրեց թրեյնինգների, հետազոտությունների և վերլուծությունների իրականացման համար: Ի վերջո 1983 թ.-ին հիմնադրվեց Միջազգային անվտանգության և սպառազինությունների վերահսկման կենտրոնը (CISAC-Center For International Security And Arms Control): Ի սկզբանե, CISAC-ը որդեգրել է հետևյալ երեք *սպարակները*.

- հետազոտել և բացահայտել միջազգային անվտանգության հիմնախնդիրները,
- կրթել և մարզել նոր սերնդին՝ որպես անվտանգության ոլորտի մասնագետներ,
- ազդեցություն ունենալ միջազգային անվտանգության ոլորտում քաղաքականության ձևավորման վրա:

Հիմնադրման պահից ի վեր CISAC-ի գործունեությունը կենտրոնացված էր հիմնականում ԱՄՆ-Խորհրդային Միություն-Չինաստան հարաբերությունների ուսումնասիրության, սպառազինությունների վերահսկման և տարածման կանխարգելման վրա:

1983 թ. Քարնեգի հիմնադրամը կենտրոնին տրամադրեց ֆինանսական միջոցներ գիտնականներին միջազգային անվտանգության հարցերի հետազոտությանը ներգրավելու համար: Գիտնականները, սոցիոլոգները, անվտանգության ոլորտի մասնագետները և փորձագետները, ինչպես նաև

երիտասարդ ուսանողները ներգրավվում են կենտրոնում վերոնշյալ ուղղություններով աշխատանքներին:

1990 թ. Միխայիլ Գորբաչովը այցելեց Սթենֆորդի համալսարան և ողջունեց CISAC-ի գործունեությունը և համապատասխան ջանքերը, որոնք ուղղված էին հաղթահարելու և վերահսկելու «Սառը պատերազմը»:

1998 թ. Միջազգային անվտանգության և սպառազինությունների վերահսկման կենտրոնը վերանվանվեց Միջազգային անվտանգության և համագործակցության կենտրոնի: Կենտրոնի նպատակներին ավելացավ նաև նրանց մշակած միջազգային անվտանգության ապահովման քաղաքականությունը:

Միջազգային անվտանգության և համագործակցության կենտրոնի *գործունեության հիմնական ուղղություններն են*<sup>32</sup>

- միջուկային անվտանգություն և ռիսկ,
- կիրճանվտանգություն,
- կենսաբանական անվտանգություն և գլոբալ առողջապահություն,
- ահաբեկչություն, ապստամբություն և ազգային անվտանգություն,
- կառավարում, կազմակերպություններ և անվտանգություն,
- միգրացիա և վերազգային հոսքեր:

*CISAC-ի կազմակերպական կառուցվածքը*<sup>33</sup>:

*Ղեկավարություն*՝ համատեղ տնօրեններ (2), հետազոտող փոխտնօրեն, ֆինանսների և վարչական հարցերով հետազոտող փոխտնօրեն:

*Փորձագետների խումբ*՝ գիտահետազոտական անձնակազմ (Քենետ Էրոու (Kenneth Arrow)) (38), հրավիրյալ գիտնականներ և ասպիրանտներ (75), վարչական անձնակազմ և փորձագետների օգնականներ (14), ասպիրանտներ և հետազոտողներ (135):

Կենտրոնում կարող են աշխատել ուսանողներ, գիտնականներ, պրոֆեսորներ, անվտանգության ոլորտի աշխատակիցներ, գործարար ոլորտի աշխատակիցներ, կառավարության ներկայացուցիչներ, այդ թվում՝ Բարաք Օբամայի աշխատակազմից ներկայացուցիչներ:

*Հրապարակումներ*: Կենտրոնը հրապարակում է տարեկան հաշվետվություն, 5–6 ընթացիկ հաշվետվություններ, որոնք դասակարգվում են ըստ հեղինակի, ըստ թեմայի և ըստ աշխարհագրական դիրքի, ինչպես նաև տարեկան 150–200 հոդված: Բացի դրանից, CISAC-ը հրատարակում է նաև հատուկ զեկույցներ, ակադեմիական հաշվետվություններ, գրքեր, ամսագրային հոդվածներ, աշխատանքային թղթեր, հետազոտական նյութեր: Հատուկ զեկույցներում ներառվում են որոշակի հիմնախնդիրների ուսումնասիրություն-

<sup>32</sup> [http://cisac.stanford.edu/docs/about\\_cisac/](http://cisac.stanford.edu/docs/about_cisac/)

<sup>33</sup> <http://cisac.stanford.edu/people/list/>


ներ, անվտանգության ոլորտում արդյունավետ ռազմավարության մշակում և այլն:

**«Ուղեղային կենտրոնի» ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝**

- Դոնորները, որոնք կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ֆինանսավորումն իրականացվում է հեռախոսի, ֆաքսի, էլեկտրոնային հասցեի, գործող հաշվեհամարի միջոցով: Նվիրատվությունները կազմում են նվազագույնը 25 ԱՄՆ դոլար<sup>34</sup>:
- Միջազգային գիտությունների անկախ ինստիտուտը, որը, իր հերթին, միջոցներ ստանում է միջազգային կազմակերպություններից և վերազգային կորպորացիաներից: Սա CISAC-ի գլխավոր ֆինանսական աղբյուրն է<sup>35</sup>:
- Կառավարությունը: Երկրի կառավարությունը կենտրոնին միջոցներ է տրամադրում կատարված պատվերներին համապատասխան:

**Բյուջեի եկամուտները 2012 թ. եղել են 4.745.990 ԱՄՆ դոլար և ունեն հետևյալ կառուցվածքը<sup>36</sup>**

- Գործընկերային եկամուտներ–2.1%
- Հավաքագրված միջոցներ–23.8%
- Նվիրատվություններ–19.1%
- Դրամաշնորհներ և պայմանագրեր–42.0%
- Համալսարանական ընդհանուր ֆոնդ–9.1%
- Համալսարանական մեկանգամյա ֆոնդ–3.9%



**Գծապատկեր 5** | Բյուջեի եկամուտները 2012 թ.


<sup>34</sup> [http://cisac.stanford.edu/docs/supporting\\_fsi/](http://cisac.stanford.edu/docs/supporting_fsi/)

<sup>35</sup> <http://fsi.stanford.edu/>

<sup>36</sup> [http://iis-db.stanford.edu/pubs/24496/Shorenstein\\_APARC\\_Center\\_Overview\\_2012-2013.pdf](http://iis-db.stanford.edu/pubs/24496/Shorenstein_APARC_Center_Overview_2012-2013.pdf), Annual report 2012, էջ 20:

**Ծախսերը 2012 թ. եղել են 4.410.933 ԱՄՆ դոլար և ունեն հետևյալ կառուցվածքը<sup>37</sup>**

- Հետազոտություններ, վարչական աշխատանքներ, պարզևատրումներ 58.2%
- Կրթաթոշակներ և աջակցություն ուսանողներին–13.4 %
- Համաժողովներ և ճանապարհորդություն–14.4 %
- Գործառնական այլ ծախսեր–5.2 %



**Գծապատկեր 6** | 2012 թ. ծախսերը

**Ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներին<sup>38</sup>**

Ուսումնասիրության հիմնական ոլորտներն են՝

- միջուկային զենքի քաղաքականություն և տարածման կանխարգելում,
- միջուկային էներգիա,
- կիրճանվտանգություն,
- կիրճապատերազմներ,
- համացանցի ապագան,
- կենսաանվտանգություն և գլոբալ առողջապահություն,
- աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետևանքներ,
- ապստամբություն, ահաբեկչություն և ազգային անվտանգություն,
- պատերազմներ և գլոբալ հակամարտություն,
- խաղաղության հաստատում հակամարտությունից հետո,
- գլոբալ կառավարման, միգրացիայի, վերազգային հոսքերի և թրաֆիքինգի կառավարում:

<sup>37</sup> [http://iis-db.stanford.edu/pubs/24496/Shorenstein\\_APARC\\_Center\\_Overview\\_2012-2013.pdf](http://iis-db.stanford.edu/pubs/24496/Shorenstein_APARC_Center_Overview_2012-2013.pdf), Annual report 2012, էջ 20:

<sup>38</sup> [http://cisac.stanford.edu/docs/cisac\\_fellowships/](http://cisac.stanford.edu/docs/cisac_fellowships/)

Ուղշունվում են նաև հետազոտական այլ նախապատվություններ ունեցողները:

**Հիմնական պահանջներն են՝** առցանց ռեժիմով դիմումի լրացում, ինքնակենսագրական, հետազոտական աշխատանքի օրինակ (առավելագույնը 50 էջ), բարձրագույն կրթություն, երաշխավորման 3 նամակ:

Դիմորդները պետք է լինեն՝ գիտության, ազգային անվտանգության, իրավագիտության ոլորտներից, ինչպես նաև գինվորականներ, կառավարության ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ:

Կենտրոնը խրախուսում է դիմորդ-կանանց և փոքրամասնություններին՝ անկախ քաղաքացիությունից:

**Դրամաշնորհները:** Պարգևատրման չափը կախված է հետազոտության բնույթից<sup>39</sup>:

Հետդոկտորական կոչում ունեցողները պարգևատրվում են՝ կախված հետազոտության վրա ծախսած ժամանակից, որը կարող է տատանվել 1-ից մինչև 9 ամիս: Երիտասարդ մասնագետների (հետդոկտորական կոչում չունեցող) պարգևատրման չափը 25000–27000 դոլար է, հետդոկտորական կոչում ունեցող հետազոտողները վարձատրվում են 48000–65000 դոլարի չափով:

Ուղեղային կենտրոնը հոգում է նաև մասնակիցների առողջության ապահովագրության ծախսերը: Բնակության և կեցության ծախսերը հոգում են իրենք՝ մասնակիցները:

**CISAC-ի բակալավրիատի գերազանցության ծրագիրը:**

Կենտրոնի շրջանավարտները հաճախ են շեշտադրում այս ծրագրի կարևորությունն իրենց հետագա աշխատանքային կարիերայում, ինչպես նաև դիպլոմային և ակադեմիական աշխատանքների պատրաստման գործում<sup>40</sup>: CISAC-ի բակալավրիատի գերազանցության ծրագիրը ներդրվել է 2000 թվականին: Մինչև 2013 թ. ծրագրում ընդգրկված են եղել 147 ուսանողներ 21 տարբեր ֆակուլտետներից: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուսանողներին հետազոտություններ կատարելու միջազգային անվտանգության ոլորտում, դրսևորելու իրենց ինտելեկտուալ կարողությունները, ինչպես նաև համապատասխան վարձատրություն ստանալու:

Ուսանողները ծրագրում ընդգրկվում են մրցութային հիմունքներով: Նախքան ծրագրին անդամակցելը՝ նրանք անցնում են 2 փուլ.

- PS 114S (միջազգային անվտանգությունը փոփոխվող աշխարհում)
- MS & E 193 (տեխնոլոգիա և ազգային անվտանգություն):

<sup>39</sup> [http://cisac.stanford.edu/docs/cisac\\_fellowships/](http://cisac.stanford.edu/docs/cisac_fellowships/)

<sup>40</sup> [http://cisac.stanford.edu/docs/undergraduate\\_honors\\_program](http://cisac.stanford.edu/docs/undergraduate_honors_program)

Ուսանողը պետք է ունենա գերազանց առաջադիմություն և կարող է ներկայացնել ցանկացած ֆակուլտետ:

**Ծրագիրն ունի 4 հիմնական պահանջներ՝**

- պրակտիկա անվտանգության ոլորտի կազմակերպություններում կամ պետական հաստատություններում՝ յուրացնելու համար գլոբալ անվտանգության համաշխարհային քաղաքականության փորձը: Պրակտիկան կարող է անցկացվել մինչև ծրագրին անդամակցելը, ինչպես նաև անդամակցելու շրջանում,
- անդամակցություն CISAC-ի պատվավոր քոլեջում իրականացվող երկշաբաթյա ծրագրին, որը տեղի է ունենում Վաշինգտոնում սեպտեմբերին՝ մինչև ուսումնական տարվա սկսվելը,
- մասնակցություն CISAC-ի ծրագրի շաբաթական սեմինարներին՝ որպես և՛ կենտրոնի հետազոտող, և՛ դասավանդող ասիստենտ,
- CISAC-ի բակալավրիատի գերազանցության ծրագրի տարեկան զեկույցի հետազոտություն և վերլուծություն, որն օգնում է միջազգային անվտանգության հիմնախնդիրների բացահայտմանն ու յուրացմանը: Յուրաքանչյուր ուսանողի հետազոտությունն ունի անհատական բնույթ և հիմնված է վերջինիս մասնագիտական ուղղվածության վրա:

CISAC-ի աշխատակիցները ազատ մուտք ունեն կենտրոնի գրադարան, ինչպես նաև դրանից կարող են օգտվել Սթենֆորդի համալսարանի այլ ուսանողներ, դասախոսներ և աշխատակիցներ:

## **1.5 | Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտ (MGIMO)**

Հիմնադրվել է 1944 թ. հոկտեմբերին միջազգային հարաբերությունների զարգացման և խորացման նպատակով: Հիմնական նպատակն է հետազոտություններ իրականացնել միջազգային հարաբերությունների ներկայիս զարգացման միտումների, նորարարական տեխնոլոգիաների ներդրման ասպարեզում, ինչպես նաև իրականացրած հետազոտությունների արդյունքները ներդնել գործնական հատվածում: Ներկայումս միջազգային հետազոտական ինստիտուտի գիտական և փորձագիտական արտադրանքի հիմնական սպառողներն են պետական մարմինները (Պաշտպանության նախարարություն, Դաշնային խորհուրդ), որոնք զբաղվում են երկրի արտաքին քաղաքականությամբ:

2012 թվականին միջազգային հետազոտական ինստիտուտը կազմել և Արտաքին գործերի նախարարություն է ուղարկել վերլուծական բնույթի 76

հետազոտություն և զեկույց, որոնց մի մասն արդեն ստացել է գործնական կիրառություն: MGIMO-ն մեկ տարվա ընթացքում յուրաքանչյուր անձի վերապատրաստման համար ծախսում է մոտավորապես 10.000 ԱՄՆ դոլար (համեմատության համարնշենք, որ Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտը մեկ անձի վերապատրաստման համար տարեկան ծախսում է 1 միլիոն դոլար կամ 100 անգամ ավելի):

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը տարեկան պլանային հետազոտական պատվերներ է ներկայացնում հետազոտական կենտրոնին՝ առավել հրատապ միջազգային հարցերի շուրջ: Իրականացվում են նաև համատեղ աշխատանքներ՝ իրադարձությունների ուսումնասիրում, կորստեղաններ, գիտնականների և դիվանագետների մշտական երկխոսություն՝ ի շահ Ռուսաստանի արտաքին քաղաքականության:

Հետազոտական կենտրոնը համակարգում և օժանդակում է համալսարանի շրջանակներում իրականացվող գիտական գործընթացները: Միջազգային հարաբերությունների արդիական խնդիրների վերլուծությունը բազմաթիվ կոնֆերանսների, սեմինարների, գործնական պարապմունքների քննարկման թեման է: Կենտրոնը հրապարակում է գիտական խորհրդի և ռեկտորի՝ արդեն հաստատված գիտական հոդվածներ, հրապարակումներ միջազգային հարցերի շուրջ: Կենտրոնի գիտական աշխատակազմը ներգրավված է համալսարանի ուսումնական դասագրքերի և ձեռնարկների մշակման գործընթացում:

MGIMO-ի<sup>41</sup> ղեկավարությամբ գործում են Եվրոպական իրավունքի ինստիտուտը, Կառավարման միջազգային ինստիտուտը, Էներգետիկ քաղաքականության և դիվանագիտության միջազգային ինստիտուտը, MGIMO-ի Եվրոպական գիտական ինստիտուտը, Բիզնես դպրոցը:

MGIMO-ի ֆակուլտետներն են՝

- Միջազգային հարաբերություններ,
- Միջազգային իրավագիտություն,
- Միջազգային տնտեսական հարաբերություններ,
- Միջազգային լրագրություն,
- Միջազգային քաղաքագիտություն,
- Միջազգային բիզնես և բիզնեսի վարչարարություն,
- Աշխատանքի տնտեսագիտություն և կոմերցիա:

Միջազգային հետազոտական կենտրոնը բաղկացած է 11 ստորաբաժանումից, որոնք իրենց հետազոտություններն իրականացնում են միջազգային մակարդակի խնդիրների, դրանց լուծման մեթոդների հայտնաբերման՝ սկսած Խորհրդային իշխանության տարածքի զինաթափման, միջազ-

<sup>41</sup> <http://www.mgimo.ru>

գային բազմաբնույթ հակամարտությունների վերացման և մի շարք հայեցակարգային խնդիրների շրջանակներում: MGIMO-ն ունի 25 մասնաճյուղ-գրասենյակ Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզերում:

2012 թ. միջազգային հետազոտական ինստիտուտ կազմակերպվել են 36 խոշոր միջոցառումներ, կոնֆերանսներ: Հիմնական թեմաներ են՝ Մերձավոր Արևելք (Սիրիա), ռուս-ամերիկյան հարաբերություններ, ռուս-վրացական հարաբերություններ և այլն:

Միջազգային հետազոտությունների ինստիտուտը հրապարակում է «Ежегодник ИМИ» տարեգիրքը՝ որպես ինստիտուտի գիտական աշխատանքների հավաքածու: Հրապարակվող հետազոտությունները ընդգրկում են ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային խնդիրների լայն շրջանակ, այդ թվում՝ գլոբալ զարգացման, միջազգային խաղաղության, ՄԱԿ-ի գործունեության, տարածաշրջանային զարգացման խնդիրներ: Ըստ ժամանակաշրջանների՝ հետազոտությունները ներառում են արդիական տարբեր հիմնահարցեր, օրինակ՝ «Ежегодник ИМИ»-2013<sup>42</sup>-ի առաջին համարի հետազոտություններում ընդգրկված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականության ուղղվածությունը, միջազգային և ազգային համատեքստում խմելու ջրի խնդիրը, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների (ԲՌՀՀԱ, ՄԱԿ, ԵՄ, ԱՊՀ) գործունեությունը:

MGIMO-ում այսօր աշխատում է ավելի քան 2.200 մարդ, նրանց թվում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի 9 ակադեմիկոս և թղթակից անդամ, 17 վաստակավոր գիտնական, 11 գիտաշխատող, 5 վաստակավոր իրավաբան, 28 պրոֆեսոր, մոտ 150 դասախոս, գիտությունների 400 թեկնածու, գիտությունների 210 դոկտոր: Ուսանողների թիվը գերազանցում է 6000-ը, իսկ շրջանավարտների թիվը՝ 30 հազար մարդ:

MGIMO-ն լրացուցիչ խթաններ է կիրառում միջազգային մրցունակությունը բարձրացնելու համար: Այսպես, եթե հողվածը հրապարակվում է միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերից որևէ մեկում՝ հեղինակին տրամադրվում է 150.000 ռուբլի պարգևավճար:

2010 թ. MGIMO-ն նշվել է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես առավել թվով օտար լեզուներ դասավանդող ուսումնական կենտրոն (53 օտար լեզու):

MGIMO-ում վճարվող աշխատավարձերի չափերը սահմանված են կառավարության որոշմամբ: Ըստ այդ որոշման՝ աշխատավարձերի վճարման ֆոնդը հատկացվում է Դաշնային բյուջեի միջոցներից և օրինական այլ աղբյուրներից (պատվերների վճարներից, հովանավոր հիմնադրամներից):

<sup>42</sup> Ежегодник ИМИ – 2013 / Отв. ред. А.А. Орлов. Москва: МГИМО-Университет, 2013, вып. 1(3), 244 с.



Պարզևավճարները սահմանում է ռեկտորը, եթե աշխատանքը նորարարություն է կամ կիրառվել է նոր մեթոդաբանություն, առաջարկվել են նոր ծրագրեր, կամ այդ աշխատանքը բարձրացրել է համալսարանի վարկանիշը միջազգային ասպարեզում և այլն:

## 1.6 | Սասեքսի համալսարանի Զարգացման հետազոտությունների ինստիտուտ

*Գլոբալ կրթություն գլոբալ փոփոխությունների համար...*

Զարգացման հետազոտությունների ինստիտուտը (The Institute of Development Studies, IDS) առաջատար ուղեղային կենտրոն է միջազգային հետազոտությունների զարգացման, ուսուցման և հաղորդակցության ոլորտում: Հիմնադրել է 1966 թ. սոստեսագետ Դադլի Սիբսը, գտնվում է Սասեքսի համալսարանում (Մեծ Բրիտանիա): IDS-ի հետազոտությունները վերաբերում են գլոբալ մարտահրավերների՝ աղքատության և անարդարության բարդ ու մշտական խնդիրներին<sup>43</sup>:

IDS-ի հիմնական ռազմավարական նպատակներն են.

- Նոր հարաբերությունների կառուցում այն անձանց և կազմակերպությունների հետ, որոնք գլոբալ փոփոխությունների ձևավորման գործում ազդեցիկ դեր ունեն:
- Տարբեր հեռանկարների համակցում, որ մարդիկ կարողանան իրենց գիտելիքները ներդնել այն հետազոտության մեջ, ինչն առավել հիմնավորված և արդիական է:
- Ներկա լինել այնտեղ, որտեղ անհրաժեշտ է՝ համոզելու զարգացման մասին որոշումներ կայացնողներին ճիշտ հնարավորություններ ընտրելու նպատակով:
- Լինել համահունչ նպատակներին, ապահովել երկրի մշակույթի, ռեսուրսների, համակարգերի և կառուցվածքների համապատասխանությունը նախորդ երեք նպատակներին:

**Հետազոտությունների թեմատիկ ուղղվածությունը:** IDS-ի հետազոտությունները վերաբերում են գլոբալ մարտահրավերներին՝ աղքատության և անարդարության բարդ ու մշտական խնդիրներին: Նրանք օգտագործում են բազմաառարկայական մոտեցում և համագործակցում գործընկերների միջազգային ցանցի հետ՝ ծավալելու համար հետազոտություններ, զարգաց-

<sup>43</sup> <http://www.ids.ac.uk/about-us>

ման քաղաքականությունում և պրակտիկայում դրանք դարձնելով կիրառելի: Հետազոտությունների թեմատիկ ուղղություններն են<sup>44</sup>.

- գյուղատնտեսություն,
- օժանդակություն,
- գործարարություն,
- կլիմայի փոփոխություններ,
- հակամարտություններ և անվտանգություն,
- տնտեսություն և ֆինանսներ,
- առևտուր և զարգացում,
- շրջակա միջավայր,
- պարենային անվտանգություն,
- միջսեռային հարաբերություններ,
- կառավարում,
- կանաչ փոխակերպում,
- առողջություն,
- ՄԻԱՎ,
- տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ,
- հազարամյակի զարգացման նպատակները (MDGs) և 2015 թ-ից հետո օրակարգը,
- սնուցում, կերակրում,
- աղքատություն,
- իրավունքներ,
- գրավչություն,
- սոցիալական պաշտպանություն,
- հարկում,
- քաղաքակենտրոնացում,
- ջուր և առողջապահություն:

Ուսումնասիրվող ոլորտների մասին կարելի է պատկերացում կազմել՝ դիտարկելով Ինստիտուտի **հետազոտական խմբերը**:

- Գլոբալիզացման թիմ: Ուշադրությունը կենտրոնացնում է գլոբալ միջավայրի շարժընթացի վրա, որտեղ մասնավոր հատվածի ներդրումներն ու աճը անհրաժեշտ են աղքատության կրճատման համար:
- Կառավարման թիմ: Կառավարման գիտահետազոտական խմբի անդամները, համագործակցում են Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Արևելյան Եվրոպայի գիտնականների և գործընկերներ հաստատությունների հետ՝ պետական իշխանության,

<sup>44</sup> <http://www.ids.ac.uk/research>

պետական ներուժի, անվտանգության, իրավունքի և խաղաղության թեմաներով:

- Գիտելիքի, տեխնոլոգիայի և հասարակության թիմ (KNOTS): Հետազոտություններ այն մասին, թե գիտությունը և տեխնոլոգիան ինչպես կարող են բարձրացնել աղքատ բնակչության կենսամակարդակը և նպաստել սոցիալական արդարությանը:
- Մասնակցության, իշխանության և սոցիալական փոփոխությունների խումբ: Խումբը, աշխատելով աշխարհի տարբեր երկրների տարատեսակ գործընկերների հետ, սոցիալական փոփոխությունների համար գեներացնում է գաղափարներ ու գործողություններ:
- Խոցելիության և աղքատության կրճատման թիմ: Այս խումբը ձգտում է կառուցել խոցելիության և աղքատության կրճատման դիսամիկ ու բազմակողմ հեռանկարներ՝ կերպավորելով այդ ուղղությամբ նախկին մտածողությունը, քաղաքականությունը և պրակտիկան:

**Ֆինանսավորում:** IDS-ը հիմնադրվել է 1966 թ. որպես Սասեքսի համալսարանում անկախ գիտահետազոտական ինստիտուտ: Մերտ կապեր ունի Սասեքսի համալսարանի հետ, բայց ֆինանսապես և սահմանադրորեն անկախ է: IDS-ը գրանցված է որպես սահմանափակ երաշխիքով բարեգործական կազմակերպություն:


IDS-ը չունի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Միջոցներն ապահովվում են մի շարք կազմակերպություններից, հետազոտական դրամաշնորհներից, խորհրդատվական ծառայություններից, ուսուցումից և հրապարակումների վաճառքից: Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտը (DFID) IDS-ի խոշորագույն ֆինանսավորման աղբյուրն է: Ինստիտուտը միջոցներ է ստանում նաև ԵՄ-ից, ՄԱԿ-ի տարբեր հաստատություններից, ինչպես նաև օժանդակություն մի շարք գործակալություններից, հիմնադրամներից, տրեստներից: Այդ ֆոնդերի մեծ մասը ձեռք է բերվել մրցութային հիմունքներով, իսկ դրանց զգալի մասը փոխանցվում է գործընկերներին, հատկապես՝ զարգացող երկրների գիտահետազոտական կազմակերպություններին: Յուրաքանչյուրը կարող է աջակցել ինստիտուտի գործունեությանը՝ առցանց պարբերական կամ մեկանգամյա նվիրատվություն կատարելով՝ սկսած 5 ֆունտ ստեռլինգից:

**Հիմնական դոնորներն են՝**


- Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման դեպարտամենտը՝ 51.9%,
- Տնտեսական և սոցիալական հետազոտությունների խորհուրդը՝ 8.3%,

- Շվեդիայի միջազգային համագործակցության զարգացման գործակալությունը՝ 3.4%,
- Պարենային քաղաքականության միջազգային հետազոտական ինստիտուտը՝ 2.8%,
- «Բիլ և Մելինդա Գեյթս» հիմնադրամը՝ 2.6%,
- Ավելացել է դոնորների քանակը 25%-ով, որոնք ներդնում են ավելի քան 100 հազար ֆունտ ստերլինգ:

Եկամուտներ



Ծախսեր



**IDS-ը հրապարակում է** ազատ ներբեռնման ենթակա աշխատանքային փաստաթղթեր (տարեկան 15-20 հատ), քննարկման փաստաթղթեր (վերջին հրապարակումը 2010 թ.), գիտահետազոտական զեկույցներ (գրեթե ամիսը մեկ պարբերականությամբ), կիրառական փաստաթղթեր (վերջին հրապարակումը՝ 2011 թ.), քաղաքական ճեպագրույցներ (տարեկան 15–16 անգամ), արագ արձագանքման ճեպագրույցներ (4 ամիսը՝ մեկ), գրքեր (2013 թ.՝ 17 գիրք, որոնք, սակայն, վճարովի են և բեռնվում են IDS ինտերնետ-խանութից) և ընդգրկում են հետազոտական խմբերի կողմից զարգացման բոլոր թեմաները: Աշխատելով Wiley-ի հրատարակիչների հետ՝ IDS-ը հրապարակում է նաև ամսագրի կարևորագույն թողարկումները, IDS-ի տեղեկագիրը ամեն տարի: Տեղեկագրերը լույս ընծայելուց 4 տարի անց դրանք անվճար կարելի է ներբեռնել:

**Աշխատակազմ:** Ինստիտուտի անձնակազմը բաղկացած է շուրջ 100 հետազոտողներից, գիտական ծառայությունների 40 աշխատակիցներից, 65 պրոֆեսիոնալ աշխատակիցներից և մոտավորապես 200 ուսանողներից: Սակայն IDS-ի համայնքը դուրս է գալիս իր շրջանակներից՝ ընդգրկելով ավելի քան 250 գործընկերների, 2000 շրջանավարտների և հարյուրավոր նախկին աշխատակիցների լայն ցանցը: IDS-ի ուսանողների 90%-ը փորձառու պրոֆեսիոնալներ են, ովքեր աշխատել են ոչ պետական կազմակերպություններում (46%), կառավարությունում (15%), ակադեմիաներում (6%) կամ

ՄԱԿ-ի գործակալություններում (4%), այլ (4%): Զբաղվածների 33%-ը տղամարդիկ են, 67%-ը՝ կանայք:

IDS-ն առաջարկում է ասպիրանտների համար միջազգային զարգացման գծով հետևյալ կուրսերը.

- հետազոտությունների գծով գիտությունների թեկնածու,
- զարգացման հետազոտությունների մագիստրոսական ծրագիր,
- մագիստրոսական ծրագիր. գենդեր և զարգացում,
- մագիստրոսական ծրագիր. գլոբալացում և զարգացում,
- մագիստրոսական ծրագիր. կառավարում և զարգացում,
- մագիստրոսական ծրագիր. մասնակցություն, իշխանություն և սոցիալական փոփոխություն,
- մագիստրոսական ծրագիր. աղքատություն և զարգացում,
- մագիստրոսական ծրագիր. գիտություն, հասարակություն և զարգացում,
- մագիստրոսական ծրագիր. կլիմայի փոփոխություն և զարգացում:

Այդ ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ են որոշակի գիտելիքներ՝ համապատասխան ոլորտներում: Ընդհանուր պահանջը բոլոր ծրագրերի համար անգլերեն լեզվի նվազագույնը 7 միջին միավորի առկայությունն է (IELTS-ի կամ դրա համարժեքի), սակայն յուրաքանչյուր բաժնի գնահատականը պետք է 6.5-ից պակաս չլինի:

## 1.7 | Կանխատեսման մեթոդներ

Մեր ուսումնասիրած և ներկայացրած ուղեղային կենտրոնների բնորոշ հատկանիշներից է վերլուծությունների և հետազոտությունների իրականացման ընթացքում կանխատեսման մեթոդների կիրառումը, որոնցից մի քանիսը թեպետ հանդիպում են այս կամ այն կենտրոնում, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք կարելի է դասակարգել 2 խմբում.

1. *ներըմբնտղական (ինտրոիտիվ) կամ զգայական,*
2. *ձևայնացված:*

Զգայական մեթոդները, իրենց հերթին, բաժանվում են 2 խմբի՝ փորձագիտական գնահատումների և տրամաբանական մոդելավորման: Փորձագիտական մեթոդն օգտագործելիս գնահատականը կարող է տալ ինչպես առանձին մասնագետը, այնպես էլ մասնագետների խումբը: Ձևականացված մեթոդները հենվում են մաթեմատիկական մոդելների կառուցման և հաշվարկների վրա:

Փորձագիտական գնահատման մեթոդի էությունն այն է, որ կանխատեսման հիմքում դրվում է գիտական և պրակտիկ փորձ ունեցող մասնա-

գետների կարծիքը: Դրանք մի քանի տեսակ են, ստորև կներկայացնենք «Դելֆի» և «Գաղափարների կոլեկտիվ գեներացման» մեթոդները:

**Դելֆի մեթոդ**<sup>45</sup>: Սա փորձագիտական գնահատման հիմնական տեսակներից է: Մեթոդի կիրառման ժամանակ օգտագործվում է հարցաթերթիկների սկզբունքը: Օգտագործվող անհատական հարցաթերթիկները տեղեկատվություն են պարունակում նախորդ փուլերի վերաբերյալ: Փորձագետների հարցումը կատարվում է մի քանի փուլերով: Ամեն մի փուլից հետո հարցաթերթիկում լրացվում է նախորդ փուլի արդյունքը, որին ծանոթանում են բոլոր փորձագետները:

Այս մեթոդի առավելությունն այն է, որ արտաքին գործոնների ազդեցությունը նվազագույնն է: Փորձագետները հնարավորություն և ժամանակ ունեն մանրամասն վերլուծելու և կշռադատելու իրենց առաջարկությունները: Գնահատումների միջինացումը բավական անաչառ է, քանի որ խիստ շեղվող պատասխաններն առանց հիմնավորման չեն կարող հաշվի առնվել: Այնուամենայնիվ, մոդայի ու մեդիանայի կիրառումն ունի թերություններ: Մասնավորապես, քանի որ փորձագետների խումբը միատարր չէ, բարձրորակ և ցածրորակ մասնագետների գնահատումների մեխանիկական միջինացումը ճիշտ արդյունքներ չի ապահովում: Այս թերությունը վերացնելու նպատակով օգտագործվում են փորձագետների հեղինակությունը գնահատող սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատման աղյուսակներ:

Սուբյեկտիվ գնահատման աղյուսակը լրացնում է ինքը՝ փորձագետը, որտեղ 10 միավորանոց սանդղակով գնահատում է իր գիտելիքները տվյալ բնագավառում: Փորձագետի օբյեկտիվ հեղինակության աղյուսակը լրացնում է կանխատեսողը: Հետագայում յուրաքանչյուր փորձագետի գնահատականը ճշտվում է իր հեղինակության գործակցով:

**Գաղափարների կոլեկտիվ գեներացում կամ «Ուղեղային գրոհ»:** Ի տարբերություն Դելֆի մեթոդի, որտեղ փորձագետները միմյանց չեն հանդիպում և մեկի կարծիքը, ըստ էության, չի ազդում մյուսի վրա, այս մեթոդն իրականացվում է փորձագետների անմիջական շփման միջոցով: Մեթոդն ընդգրկում է ձևականորեն միմյանցից անկախ 2 տարր՝ օբյեկտի զարգացման հնարավոր տարբերակների որոշում և դրանց գնահատում: Այդ պատճառով ստեղծվում է փորձագետների 2 խումբ: Պրակտիկան ցույց է տալիս, որ առաջին խմբում փորձագետների թիվը 10–12 մարդուց ավելի չպետք է լինի: Նրանք առաջադրում են գաղափարները, երկրորդ խումբը գնահատում է ստացված արդյունքները: Փաստորեն, գաղափարների գեներացման նստաշրջանի արդյունքները գաղափարների մի համակարգ են. մի դեպքում

<sup>45</sup> «Դելֆի» մեթոդը մշակել են ամերիկացի տնտեսագետներ Տ. Գորդոնը և Օ. Հելմերը 1960-ական թթ. կեսերին:

դրանք կարող են տալ խնդրի լուծումը, մյուս դեպքում՝ նշել խնդրի լուծման ուղիները, երրորդ դեպքում՝ առաջադրել լուծման բոլորովին նոր մտտեցումներ: Մեթոդի կիրառումն իրականացվում է հետևյալ 6 փուլերով:

- «Ուղեղային գրոհի» մասնակիցների խմբի ձևավորում:
- Հիմնախնդրի նկարագրությունը: Այն ընդգրկում է հիմնախնդրի առաջացման պատճառները, դրա հնարավոր հետևանքները, գոյություն ունեցող լուծման ուղիները:
- Գաղափարների գեներացում:
- Գեներացման փուլում առաջադրված գաղափարների համակարգում: Կազմվում է բոլոր գաղափարների ցանկը, որոշվում են կրկնվող գաղափարները, դրանք միավորվում են և դասակարգվում խմբերի:
- Նշված բոլոր գաղափարները ենթարկվում են բազմակողմանի քննադատության՝ դեստրուկցիայի, փլուզման: Այս փուլն իրականացնում է մասնագետների երկրորդ խումբը, բաղկացած է 20–25 մասնակիցից: Հիմնական կանոնը՝ ամեն մի գաղափար դիտարկել դրա իրականացման խոչընդոտների տեսանկյունից:
- Կազմվում է ամփոփ աղյուսակ: Առաջին սյան մեջ ցույց են տրվում գաղափարները, երկրորդում՝ դրանց քննադատությունը, երրորդում՝ գաղափարների գործնական իրականացման ցուցանիշը, չորրորդում՝ քննադատության ընթացքում ծագած հակազդափարը:

**Ապագայի սրհնաքանոց կամ Future Workshop:** Future Workshop-ն ապագայի կանխատեսման գործիք է: Այն միջոցառումների նորարարական ձև է, որը թույլ է տալիս մի խումբ մարդկանց ստեղծել նոր գաղափարներ, լուծել բարդ սոցիալական և կազմակերպական խնդիրներ, կանխատեսել և ստեղծել սոցիալ-մարդասիրական և ինժեներատեխնիկական կարևորագույն միտումների «ճանապարհային քարտեզ»: Թեպետ մեթոդաբանության ձևաչափը մշակել են Ռոբերտ Ջանգը (Robert Jungk), Րյուդիգեր Լուտցը (Ruediger Lutz) և Նորբերտ Մյուլերտը (Norbert R. Muellert) դեռևս 1970-ական թթ., այն մեծ զարգացում է ապրել միայն 2008 թ. «Ազատ համաժողովների» կազմակերպման մշակույթի և Բարքեմպփի<sup>46</sup> գլոբալ տարածմամբ: Future Workshop-ը հատկապես հարմար է այն մարդկանց համար, որոնք ունեն ստեղծագործական որոշումների ընդունման որոշակի փորձ, օրինակ՝ երիտասարդների: Սակայն այն պահանջում է ինտենսիվ ուսուցում, քննարկումներ բարձր որակավորման մոդերատորների հետ<sup>47</sup>:

<sup>46</sup> Համաժողովի միջազգային ցանց, որը ստեղծում են դրա մասնակիցները: Այն բաց է բոլորի համար, ընթանում է զեկույցների, պրեզենտացիաների, քննարկումների տեսքով: Նման համաժողովներ անցկացվում են նաև Հայաստանի ամերիկյան համալսարանում:

<sup>47</sup> <http://www.atomic-energy.ru/news/2010/12/10/16674>

Future Workshop-ը ստեղծվել է հնարավորություն տալու համար ամեն մի անհատի ներգրավվել իր նախընտրած ապագայի ստեղծման մեջ և ոչ թե ենթարկվել փորձագետների ընդունած որոշումներին: Դրա նպատակն է, առաջին հերթին, պատկերացնել ցանկալի ապագան, և հետո միայն պլանավորել ու իրականացնել այն:

Future workshop-ն ունի 4 փուլ.

- նախապատրաստական փուլ. մասնակիցների ծանոթություն, հստակեցվում է միջոցառման կանոնակարգը,
- օպերատիվ փուլ. սկսվում են դիտարկվող հարցի ուսումնասիրությունն ու քննարկումը,
- պատկերացումների փուլ. մասնակիցներն արտահայտում են դիտարկվող խնդրի ապագայի իրենց պատկերացումները, ցանկությունները և տեսակետը (մասնակիցները կարող են հաշվի չառնել իրական խոչընդոտները և սահմանափակումները),
- վերջին փուլը ներառում է գաղափարների իրագործելիության և երկրորդ փուլում առաջարկված լուծումների վերլուծությունը, ինչպես նաև սահմանափակումների ու արգելքների բացահայտումը, դրանք հաղթահարելու տարբերակները:

Future Workshop-ը Հուլի 2008 թ. սկսած: Նման համաժողովներ, ամենից հաճախ, անցկացվում են Տնտեսական քաղաքականության աշխատանքային խմբի շրջանակներում՝ Ջորջ Շուլցի գլխավորությամբ:

*Տրամաբանական մոդելավորման* մեթոդներն օգտագործվում են հիմնականում օբյեկտի որակական բնութագիրը տալու համար: Սոցիալ-տնտեսական օբյեկտի զարգացման գործընթացի որակական բնութագիրը ներկայացնելիս օգտագործվում են տրամաբանության ընդհանուր մեթոդները՝ վերլուծություն և համադրություն, մակաձուլություն և արտաձուլություն, վերացարկում, մտահանգում ըստ նմուշի, համանմանության: Այս մեթոդների ճիշտ օգտագործման դեպքում ստացվում են ոչ պակաս ճշգրիտ արդյունքներ, քան մաթեմատիկական հաշվարկներով: Տրամաբանական մոդելավորման տեսակ է պատմական նմանական մեթոդը: Այն օգտագործելիս անհրաժեշտ է նմուշ, նմանակ ունենալ: Զարգացած երկրի պատմական փորձը պետք է գնահատել ոչ միայն ժամանակակից տեսանկյունից, այլև հաշվի առնելով այդ համակարգի համար մշակված կանխատեսումները:

*Ապագայի սցենարի մեթոդը* տրամաբանական մոդելավորման մեթոդներից է, որը հատկապես լայն տարածում ունի ռազմական և քաղաքական իրադարձությունների կանխատեսման բնագավառում<sup>48</sup>:

<sup>48</sup> Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում (Մակրոտնտեսագիտություն, 3-րդ մակարդակ), Բ. Տիգրանյանի խմբագրությամբ, ուսումնական ձեռնարկ, Եր. 2011, էջ 50–55:



Այս մեթոդը հատկապես տարածված է երկարաժամկետ կանխատեսումներ կատարելիս: Սցենարները, որպես կանոն, ենթադրում են իրադարձությունների զարգացման երեք հնարավոր տարբերակ. լավատեսական, հոռետեսական և առավել հավանական: Ընդունված է համարել, որ այս մեթոդի տեսական հիմքերը մշակվել են անցյալ դարի 60-ական թթ., իսկ կիրառական նշանակության առաջին սցենարային պլանավորումը 1971 թ. իրականացրել են *Royal Dutch Shell* նավթային ընկերության վերլուծաբանները. նրանք այդպիսով փորձել են հաշվարկել *OPEC*-ի կողմից նավթի գների բարձրացման (ինչն այն տարիներին խիստ արդիական էր) հնարավոր տարբերակները և կանխատեսել դրանց հետևանքները:

Մտածողության սցենարային կերպը թույլ է տալիս ավելի անկաշկանդ ռեժիմով գուշակել լոկալ կամ գլոբալ զարգացումների հնարավոր, երբեմն՝ փոխբացառող և ծայրահեղ թվացող տարբերակները: Սցենարային պլանավորման ժամանակ բարձր է գնահատվում փորձագետների երևակայությունը, և պատահական չէ, որ նման մշակումներում հաճախ ներգրավվում են ոչ միայն տվյալ հիմնախնդրի նեղ մասնագետները, այլև ֆանտաստ գրողները, շախմատիստները և այլք (այսպես կոչված՝ ստեղծագործ, «ոչ ստանդարտ» անձնավորությունները): Նման «ազատ» մտտեցումը, ի թիվս այլ առավելությունների, հնարավորություն է ընձեռում նախապես պատրաստվելու ռազմաքաղաքական կամ տնտեսական ամենաանսպասելի շրջադարձերին: Այդ հանգամանքների շտրիիվ «սցենարային տեխնոլոգիաները» լայն տարածում են գտել ոչ միայն պետական կառույցներում կամ նրանց հովանավորությամբ գործող «ուղեղային կենտրոններում», այլև խոշոր առևտրային ընկերություններում:

Գոյություն ունեն սցենարային մշակումների տարբեր մեթոդներ, սակայն, որպես կանոն, դրանք ենթադրում են հետևյալ քայլերի իրականացումը.

- հնարավորության դեպքում ճշտվում է իրավիճակի զարգացման ընդհանուր ֆոնը, և այդ համատեքստում առանձնանում են այն իրադարձությունները, որոնք իրականանալու մեծ հավանականություն ունեն,
- որոշվում են այն գործոններն ու բնութագրիչները, որոնք առավելագույն ազդեցություն ունեն տվյալ իրադարձության վրա,
- հնարավորինս որոշվում են վերոնշյալ գործոնների և բնութագրիչների ազդեցության առավելագույն և նվազագույն չափերը,
- դրանց տրամաբանական համեմատության արդյունքում ձևավորվում են այն հնարավոր սցենարները, որոնց իրագործման հավանականությունը գնահատվում է առավելագույն բարձր կամ, գոնե, տեսականորեն չի բացառվում<sup>49</sup>:

<sup>49</sup> [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5537](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5537)

Չնայնացված մեթոդներից ամենատարածվածը և խորը մշակվածը *մաթեմատիկական արտարկումն է*: Մրա էությունը հանգում է նրան, որ ուսումնասիրվում են երևույթի զարգացման օրինաչափություններն անցյալում և ներկայում, ապա տարածվում ապագայի վրա:

**Իրավիճակի զարգացման մեջ սուբյեկտների պահվածքի խաղային մոդելավորումը:** Խաղերի տեսությունը խաղերում օպտիմալ ռազմավարության ուսումնասիրության մաթեմատիկական մեթոդ է: Դրա հետ մեկտեղ, «խաղ» ասելով՝ հասկանում ենք մի գործընթաց, որին մասնակցող երկու և ավելի կողմերը պայքարում են իրենց շահերի համար: Ենթադրվում է, որ կողմերից յուրաքանչյուրն օգտագործում է դրված նպատակին հասնելու սեփական ռազմավարությունը, որը մշակվել է՝ հաշվի առնելով հասանելի տեղեկատվությունը և մյուս մասնակիցների, նրանց ռեսուրսների և ռազմավարությունների մասին պատկերացումները: Քաղաքանությունը հիմնված է ենթադրությունների վրա, քաղաքականություն մշակողները որոշումներ են կայացնում՝ հիմնվելով ենթադրությունների վրա: Որպեսզի իմանանք թե ինչ են պատրաստվում անել մարդիկ, հետապնդելով իրենց շահերը, պետք է հասկանանք, թե ով է ազդում որոշման վրա: Բազմաթիվ խաղացողների առկայության դեպքում գոյություն ունեն բազմաթիվ կապեր, որոնց վերաբերյալ տվյալները ոչ ոք չի կարող պահել իր գլխում, իսկ համակարգիչը կարող է: Ուստի անհրաժեշտ է համադրել խաղերի տեսությունը և համակարգչային մոդելը: ՈՒԿ-ների աշխատակիցները ոչ թե պրոյեկտում են անցյալի տվյալները ապագայի վրա, այլ ստանում են ելքային տվյալները մի կետում և փոխանցում դրանք համակարգչային մոդելին, որն էլ խաղարկում է փոխազդեցությունների դինամիկան և ներկայացնում ձևավորված դինամիկան ու քաղաքական կուրսի կանխատեսումները<sup>50</sup>:

**Բովանդակային վերլուծություն (Content Analysis):** Բովանդակային վերլուծությունը տեքստի (հոդված, ամսագիր, գիրք, վեբ կայք, հարցազրույց և այլն) ուսումնասիրման ամենահին մեթոդներից է: Բովանդակային վերլուծության առանձնահատկությունը հիմք է տվել հետազոտողներին այն դասելու «տողերի միջև կարդալու»՝ գիտականորեն հիմնավորված մեթոդների շարքին:

ԲՎ-ը տեքստի՝ նախապես սահմանված կանոններով, հավաստի, ստուգելի և օբյեկտիվ ուսումնասիրության եղանակ է՝ տեղեկատվությունը քանակական ցուցանիշների վերափոխելու միջոցով, ուղղված է այդ տեքստում արտահայտված գործընթացների (օբյեկտների, երևույթների, համատեքստի) բացահայտմանը<sup>51</sup>: Տարանջատում են բովանդակային վերլուծու-

<sup>50</sup> [http://www.ted.com/talks/bruce\\_bueno\\_de\\_mesquita\\_predicts\\_iran\\_s\\_future.html](http://www.ted.com/talks/bruce_bueno_de_mesquita_predicts_iran_s_future.html)

<sup>51</sup> Ա. Շամկոյան, Բովանդակային վերլուծությունը մեդիատեքստերի ուսումնասիրության մեթոդ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», թիվ 3, 2011, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5781](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5781)

թյան 2 տեսակ՝ քանակական և որակական: Քանակական վերլուծության դեպքում տեքստում հաշվարկվում է, այսպես կոչված՝ «վերլուծության միավորի» ի հայտ գալու հաճախականությունը: Որակական վերլուծությունն ուղղված է քանակական և որակական ցուցանիշների համադրության հաշվառմանը, առավել արդյունավետ է սուբյեկտի բացահայտ և թաքնված նպատակների բացահայտման տեսանկյունից<sup>52</sup>: Բովանդակային վերլուծությունն արդյունավետ է լինում, երբ հետազոտողին հաջողվում է որսալ տեքստի և ոչ տեքստային իրականության կապը: Երբեմն այդ կապը կարող է լինել շատ խորը և թաքնված: Մեծ «տեքստային զանգվածների» քանակական բնութագրիչների ընդհանրացումն ի վիճակի է տալու գիտելիքներ, գաղափարներ այնպիսի օրինաչափությունների և միտումների մասին, որոնց հնարավոր չէ նկատել առանձին տեքստերի նյութերում: Օրինակ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի է ունեցել բովանդակային վերլուծության պատմության մեջ ամենահայտնի դիպվածը՝ բրիտանական վերլուծաբանները կանխատեսել էին ՄԲ-ի դեմ գերմանական հրթիռների /V-1 և V-2/ օգտագործման ժամանակը, ինչը կատարվել էր գերմանական տեղեկատվական ընկերությունների վերլուծության արդյունքում: Սա ցույց է տալիս բովանդակային վերլուծության կանխատեսման ներուժը<sup>53</sup>:

Բովանդակային վերլուծության՝ նկարագրված մեթոդաբանության մեջ «տեքստային զանգված» եզրը պատահական չէ օգտագործվել: Սովորաբար, բովանդակության վերլուծության օբյեկտ է ոչ թե առանձին տեքստը, այլ բավական մեծ ծավալի տեքստեր: Դա, առաջին հերթին, պայմանավորված է արդյունքների և օրինաչափությունների վիճակագրական բնույթով, որոնք ձևավորվում են բովանդակային վերլուծության ուսումնասիրության հիման վրա: Որքան մեծ է վերլուծության մեջ ներառված տեղեկատվության ծավալը, այնքան ավելի հուսալի և հիմնավորված կլինեն արդյունքները: Բացի դրանից, բովանդակային վերլուծության ժամանակակից մեթոդները հիմնականում համակարգչայնացված են, ինչը հնարավոր է դարձնում մեծ ծավալի տեղեկատվական հոսքերի մշակումը: Վերջինս էլ հնարավորություն է ընձեռում կազմելու սուբյեկտների վարքագծի փոփոխության ժամանակային դինամիկան և կատարելու կանխատեսումներ:

<sup>52</sup> <http://window.edu.ru/resource/574/59574/files/may07166.pdf>

<sup>53</sup> Ахременко А.С., Политический анализ и прогнозирование: учеб. пособие / А.С. Ахременко. – М.: Гардарики, 2006. –333 с.

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացների ակտիվացումն ու սրացումը անմիջականորեն ազդում են ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանային և հարակից պետությունների շահերի վրա՝ առաջացնելով արտասահմանյան գիտահետազոտական և վերլուծական բազմաթիվ կենտրոնների բուռն հետաքրքրությունը: Հայաստանի արջև ծառացած մարտահրավերները առաջ են բերում տնտեսական և քաղաքական գործընթացների գիտականորեն հիմնավորված, արհեստավարժ իմաստավորման անհրաժեշտությունը: Եթե այսօր արտերկրներում վերլուծական կենտրոնների հետ մեկտեղ համալսարաններին և ակադեմիական ինստիտուտներին կից գործում են գիտահետազոտական կենտրոններ, ապա Հայաստանում կառավարական և ոչ կառավարական բավարար քանակի կազմակերպությունները հիմնականում տվյալ խնդիրը վերլուծում են իրավիճակային քաղաքականության տեսանկյունից: Մոլորություն է նկատվում հատկապես գիտական այն հետազոտությունների, որոնք կնպաստեն միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներին, որոնց հիման վրա էլ հնարավոր կդառնար մշակելու ճշգրիտ առաջարկություններ շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների համար: Նմանատիպ արդյունավետ հետազոտությունների անցկացման համար բավական արդիական է համալսարաններին կից գիտահետազոտական կենտրոնների ստեղծումը՝ համապատասխան նյութատեխնիկական հիմք և բարձր որակավորում ունեցող մասնագետներով հագեցած:

Սույն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեպետ ՀՀ-ում այսօր գոյություն ունեն հետազոտական ու գիտական բազմաթիվ կենտրոններ, սակայն դրանցից միայն քչերը կարելի է անվանել «ուղեղային կենտրոններ»: Ընդ որում, այդպես կոչվելու հիմնական խնդիրը ոչ թե համապատասխան կառուցվածքների, այլ որակավորված փորձագիտական գիտելիքների նկատմամբ պատշաճ պահանջարկի բացակայությունն է: Ելնելով վերոնշյալից, ստորև կներկայացնենք ՀՀ համալսարանական հետազոտական այն կենտրոնները, որոնք մեր կարծիքով, համապատասխանում են ՈՒԿ-ների հատկանիշներին:

## 2.1 | Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)

ԵՊՀ կառուցվածքում առկա են գիտական 10 կենտրոններ, սակայն դրանցից ոչ բոլորին են բնորոշ «ուղեղային կենտրոնի» հատկանիշները, ուստի կանդիդատանսը դրանցից միայն երեքին, որոնք առավելապես համապատասխանում են «ուղեղային կենտրոն» եզրին:

### 2.1.1. ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ

ԵՊՀ-ում հայագիտության զարգացմանը նոր թափ հաղորդելու մտահոգությամբ 1968 թ. առաջադրվեց հատուկ գիտահետազոտական լաբորատորիա ստեղծելու գաղափարը, ինչն էլ ի կատար ածվեց ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամներ Մ. Ներսիսյանի և Էդ. Աղայանի ջանքերի շնորհիվ:

Նորաստեղծ լաբորատորիան համակարգելու էր ոչ միայն կազմակերպական, այլև գիտահետազոտական աշխատանքները հումանիտար այն ֆակուլտետներում, որտեղ մշակվում էին հայագիտական թեմաներ: Հետագայում լաբորատորիան վերանվանվեց ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների կենտրոնի /ՀՀԻ/, որի գործունեության ընթացքում հսկայական աշխատանք կատարվեց: Հրատարակվել և վերահրատարակվել են հայագիտության տեսանկյունից մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ աշխատություններ: Հայագիտական կենտրոնի հիմքի վրա 2008 թ. հուլիսի 10-ին ԵՊՀ գիտական խորհուրդը ստեղծեց Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, որտեղ ներառվեցին ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնը, հնագիտական հետազոտությունների, ՀՀ պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիաները, հայ-վրացական կապերի կենտրոնը և հայ-օսմանական առնչությունների բաժինը<sup>54</sup>:

ՀՀԻ հետազոտությունների հիմնական առանցքը հետևյալ *խնդիրներն ու ուղղություններն են՝*

- Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմությունը, պատմագրությունը և մատենագիտությունը (ցեղասպանագիտության բաժին),
- հայ-օսմանական առնչությունները (հայ-օսմանական առնչությունների բաժին),
- հայ հնագիտությունը (հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայաստանի պատմական աշխարհագրության, քարտեզագրության ուսումնասիրությունը (Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա),

<sup>54</sup> <http://www.armin.am/am/About-us-History-IAS>

- հայագիտական պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրությունը (աղբյուրագիտական լաբորատորիա),
- վիրտուալ (Էլեկտրոնային-համացանցային) հայագիտությունը (վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին),
- հայ-վրացական հարաբերությունները (վրացագիտության հայկական կենտրոն),
- հայ-ադրբեջանական հարաբերությունները (ադրբեջանագիտության հայկական կենտրոն)<sup>55</sup>:

**Կառուցվածքը:** Ինստիտուտի կառավարման մարմիններն են ինստիտուտի գիտական խորհուրդը և տնօրենը: *Գիտական խորհուրդը* կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի 27 անդամներից: Գիտական խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50 տոկոսը: Գիտական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել ինստիտուտի գործունեության և մասնագիտություններին առնչվող արտահամալսարանական ու արտաինստիտուտային մասնագետներ՝ խորհրդի կազմի մինչև 15 տոկոսի չափով:

Ինստիտուտի հիմնական ստորաբաժանումներն են լաբորատորիաները, կենտրոնները և բաժինները: Դրանք են՝

- աղբյուրագիտության բաժին,
- Բ. Հարությունյանի անվան ՀՀ պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա,
- հայ-օսմանական առնչությունների բաժին,
- հնագիտական հետազոտությունների լաբորատորիա,
- վիրտուալ հայագիտության և հնագիտության բաժին,
- հայ-վրացական հարաբերությունների բաժին,
- ցեղասպանագիտության բաժին,
- հայ-քրդական առնչությունների բաժին<sup>56</sup>:

**ՀՀԻ-ի հրապարակումները են՝** «Հայագիտության հարցեր» հանդես /տարեկան 3 անգամ/, պատմագրության և բանասիրության թեմատիկ գրքեր, հոդվածներ, հրապարակախոսություններ: Էլեկտրոնային կայքում տեղադրված են նաև մի շարք պատմական տեսաֆիլմեր ու նկարներ<sup>57</sup>:

**ՀՀԻ-ի գործընկերներն են՝** ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ, Մատենադարանը (Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ),

<sup>55</sup> <http://www.ysu.am/science/hy/1381836111>

<sup>56</sup> ԵՊՀ գիտական խորհրդի որոշում 2013 թ. հոկտեմբերի 3-ի N 1/9 թիվ 1 նիստի ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

<sup>57</sup> <http://www.armin.am/am/About-us-History-IAS>

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Հայաստանի ազգային արխիվը, «Գործարար լուծումներ» ՍՊԸ:

### **2.1.2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտատնտեսական կենտրոն**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտատնտեսական կենտրոնը (ԷԻԳԿ) Հարավային Կովկասի տարածաշրջանում Էկոլոգիական իրավունքի ոլորտում հետազոտություն իրականացնող համալսարանական միակ կառույցն է: Ստեղծվել է 2008 թվականի սեպտեմբերի 16-ին ԵՊՀ-ի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև ստորագրված փոխընթացային հուշագրի հիման վրա: 2010 թվականից Կենտրոնը գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի ծրագրի շրջանակներում:

#### **Կենտրոնի առաքելությունն է**

- նպաստել ՀՀ-ում Էկոլոգիական օրենսդրության գործողության արդյունավետության բարձրացմանը,
- ընդլայնել Էկոլոգիական իրավունքի հիմնախնդիրների հետազոտության ոլորտում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կարողությունները,
- նպաստել «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացմանը ՀՀ-ում,
- նպաստել Էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ ուսանողների և երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացմանը:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար Կենտրոնը համագործակցում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև օտարերկրյա առաջատար ուսումնական հաստատությունների, միջազգային կառույցների և ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների հետ<sup>58</sup>:

Կենտրոնի հետազոտություններն ուղղված են բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբե-

<sup>58</sup> [http://www.elrc.yzu.am/?page=page&id=2&language\\_id=1](http://www.elrc.yzu.am/?page=page&id=2&language_id=1)

րությունների կանոնակարգման առաջնային սոցիալական գործոնի՝ իրավունքի վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը, ինչպես նաև իրավունքի փաստացի գործողության արդյունավետության բարձրացմանը: Կենտրոնի գործունեությունը հնարավորինս կազմակերպվում է էկոլոգիական իրավունքի գիտության ժամանակակից միտումներին համահունչ՝ հանուն գիտական արդյունքների մատչելիության ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում:

*Միջազգային համագործակցություն:* 2011 թվականից էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը Բնության պահպանության համաշխարհային միության էկոլոգիական իրավունքի ակադեմիայի անդամ է և Իրավագիտության ֆակուլտետի ու ՀՀ Ազգային ժողովի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա *հանդես է գալիս որպես օրենսդիր մարմնի փորձագիտական կառույց:*

Սերտ համագործակցություն է ձևավորվել ԱՊՀ մի շարք պետությունների իրավաբանական դպրոցների հետ, որոնցում դասավանդվում է «էկոլոգիական իրավունք» առարկան: Կենտրոնը համագործակցում է ՄԱԿ-ի ԵՏՀ Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության հետ: Կենտրոնի ղեկավար Ա. Իսկոյանը ՀՀ-ում Օրհուսի կոնվենցիայի համակարգողն է, կրտսեր գիտաշխատողներ Հեղինե Հախվերդյանը և Գոռ Մովսիսյանը Կոնվենցիայի և դրա արձանագրության համապատասխանության կոմիտեների անդամներ են: Կենտրոնի գիտաշխատողները մասնակցում են նաև ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հետազոտություններին:

Կենտրոնի աշխատակազմը ներառում է ղեկավարի և 3 գիտաշխատողի (այդ թվում՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում սովորող ուսանողուհի)<sup>59</sup>:

*Կենտրոնի գործունեությունը կարող ենք ներկայացնել ըստ ուղղությունների.*

- Իրավական ակտերի և նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկներ. օժանդակություն իրավաստեղծ գործընթացին, որոնցից կարող ենք առանձնացնել հետևյալը՝ աշխատանքային սեմինար<sup>60</sup> «ԵՄ Լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթերի վերաբերյալ դիրեկտիվի իմպլեմենտացիայի հեռանկարները հանքարդյունաբերության ոլորտում պոչամբարների և լցակայանների կառավարման համատեքստում» թեմայով: Գործընկերներն են ՀՀ բնապահպանության նախարարությունը,

<sup>59</sup> [http://www.elrc.yzu.am/?page=page&id=2&language\\_id=1](http://www.elrc.yzu.am/?page=page&id=2&language_id=1)

<sup>60</sup> Աշխատանքային սեմինարի արդյունքում համաձայնեցված մոտեցումները կամրագրվեն «Շրջակա միջավայրի վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագծում:



պետական այլ մարմիններ, ՀԿ-ներ, հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպություններ:

- Էկոլոգիական իրավունքի դասագիրք, «ԵՄ Էկոլոգիական իրավունք» մագիստրոսական դասընթացի ծրագրի մշակում:
- Ուսանողների ներգրավում ԷԻԳԿ աշխատանքներին. 2013 թ. սեպտեմբերին ԷԻԳԿ աշխատանքային ծրագիրը ներկայացվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողներին, ովքեր իրենց ընտրությամբ ներգրավվել են Կենտրոնի աշխատանքների համապատասխան ուղղություններին (10 ուսանող):
- Շրջակա միջավայրի վերաբերյալ իրավական ակտերի ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության ընթացակարգի կատարելագործման հայեցակարգի մշակում<sup>61</sup>:
- Դասախոսություններ, դասընթացներ և իրազեկության բարձրացման միջոցառումներ:
- Դասախոսություն «Բնապահպանական գործունեության իրավական կարգավորումը հանքարդյունաբերության ոլորտում» թեմայով: Գործընկերներն են՝ «Դանդի Փրիշու Մեթալս Կապան» ՓԲԸ, «Վալլեքս-գրուպ» ՓԲԸ: Մասնակցել են ԵՊՀ և այլ բուհերի ուսանողներ, դասախոսներ (30 մասնակից):
- Միջբուհական ուսանողական գիտաժողով «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ. օգուտներ և մարտահրավերներ»: Գործընկերն է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնագիտական ընկերությունը: Մասնակցել են ԵՊՀ և այլ բուհերի ուսանողներ (10 մասնակից), դասախոսներ, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ:
- Բնապահպանական ֆիլմերի ցուցադրություններ:
- Մասնակցություն միջազգային հանդիպումների և ֆորումների<sup>62</sup>:

<sup>61</sup> Հայեցակարգը հավանության է արժանացել, և 2014 թ. հունվարին ծրագրային փաթեթը կնքակայացվի ֆինանսավորման: Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝ (1) «Շրջակա միջավայրի վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակայնության մասնակցության ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, (2) վերկայքի պատրաստում, որը հնարավորություն կտա միասնական էլեկտրոնային աղբյուրում հրապարակել շրջակա միջավայրին առնչվող բոլոր իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ բոլոր կարծիքները, (3) շրջակա միջավայրի վերաբերյալ իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակայնության մասնակցության ուղեցույց (տպագրված), (4) դասընթացներ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող ՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար:

<sup>62</sup> ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի գործունեության հաշվետվություն, սեպտեմբեր-դեկտեմբեր, 2013 թ.:

*Կենսորոնի գործընկերներն են՝*

- **գիտահետազոտական կառույցներ** (ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ),
- **պետական մարմիններ** (ՀՀ Ազգային Ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողով, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն),
- **միջազգային կազմակերպություններ** (Բնության պահպանության համաշխարհային միության Էկոլոգիական իրավունքի ակադեմիա, ՄԱԿ, ԵՏՀ, Օրիոսի կոնվենցիայի քարտուղարություն),
- **հասարակական կազմակերպություններ** (Կայուն ջրային միջավայր ՀԿ, Սոցիալ-Էկոլոգիական ասոցիացիա ՀԿ, Հանուն մարդկային կայուն զարգացման ՀԿ, Հայաստանի էկոտորիզմի ասոցիացիա ՀԿ),
- **գործարար ոլորտ** (Դինո Գոլդ Մայնինգ ՓԲԸ, «Վալլեքս» իսրիլ ընկերություններ)<sup>63</sup>:

**2.1.3. ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն**

ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնն անկախ կրթական և գիտահետազոտական կառույց է, որը ստեղծվել է Երևանի պետական համալսարանի և Հայաստանում ԵՄ պատվիրակության արդյունավետ համագործակցության արդյունքում: Կենտրոնը հիմնադրվել է 2006 թ. հուլիսին և ֆինանսավորվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի կողմից տրամադրվող ամենամյա դրամաշնորհով: Կենտրոնը, լինելով ԵՄ ուսումնասիրությունների ոլորտում մասնագիտացած կրթական և գիտահետազոտական ինստիտուտ, իր առջև նպատակ է դրել բազմակողմանի և միջառարկայական հետազոտությունների, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրերի իրագործման միջոցով խթանել ՀՀ-ԵՄ համագործակցությունը և նպաստել Հայաստանի եվրոպական ինտեգրմանը:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնն առաջարկում է բարձրորակ մագիստրոսական կրթություն եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում՝ «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագիր և «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային միջմասնագիտական մագիստրոսական

<sup>63</sup> [http://www.elrc.yzu.am/?page=page&id=3&language\\_id=1](http://www.elrc.yzu.am/?page=page&id=3&language_id=1)

ծրագիր, իրականացնում է միջմասնագիտական հետազոտություններ ու տրամադրում է խորհրդատվություն ԵՄ հետ գործակցող հանրային, ոչ կառավարական կազմակերպություններին ու մասնավոր ընկերություններին: Նշված գործառույթները իրականացնելու համար Կենտրոնը իր տանիքի ներքո համախմբել է ԵՄ ուսումնասիրությունների տարբեր ոլորտների բանիմաց մասնագետների, հյուրընկալում է գործընկեր համալսարաններից հրավիրյալ դասախոսների, հետազոտողների, փորձագետների և ուսանողների:

*Անձնակազմում*՝ ներգրավված են միջազգային փորձագետներ, ավագ փորձագետներ, փորձագետներ, դասախոսներ (անդամներ են մագիստրոսական ծրագրերի շրջանակներում ներգրավված ուսանողները):

*Հեղազոտություններ:* Կենտրոնի փորձագետները բազմաբնույթ և ամբողջական ուսումնասիրություններ են ծավալում ԵՄ–Հայաստան, ԵՄ–Հարավային Կովկաս համագործակցության ոլորտներում /մի շարք հետազոտություններ թարգմանվել են անգլերեն/:

*Հեղազոտության թեմաներն են՝*

- ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականություն,
- ԵՄ ֆինանսական համակարգ,
- Եվրոպական տնտեսություն,
- ԵՄ էներգետիկ անվտանգություն,
- Ասոցացման համաձայնագիր,
- Հարավային Կովկաս,
- ՀՀ–ԵՄ հարաբերություններ, Հարավային Կովկաս–ԵՄ համագործակցություն,
- Սոցիալական պաշտպանություն,
- Տնտեսական մրցակցություն,
- Մշակույթների երկխոսություն:

Կենտրոնի իրականացրած հետազոտություններից են՝ Համաշխարհային ֆինանսական ճգնաժամին նվիրված հետազոտությունը՝ «Գլոբալ ֆինանսական ճգնաժամը և դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա» թեմայով, միջմասնագիտական հետազոտությունը՝ «ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում» թեմայով, Միջմասնագիտական հետազոտությունը՝ «Թուրքիա–ԵՄ–Հարավային Կովկաս. հնարավորություններ և մարտահրավերներ» թեմայով, սոցիոլոգիական հարցման տվյալների վերլուծությունը՝ «Երևան քաղաքի բնակչության վերաբերմունքը եվրոպական ինտեգրման գործընթացներին» թեմայով: Հրատարակումներից է նաև «Եվրոպան այսօր» պարբերականը:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի կարևորագույն առաքելություններից մեկը ԵՄ-ի վերաբերյալ ակադեմիական և տեղեկատվական բնույթի գրականության ու նյութերի ապահովումն է: Ներկայումս Կենտրոնում գործում է ռեսուրս կենտրոն, որը ներառում է ԵՄ իրավունքի, տնտեսագիտության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի և պատմության ոլորտում գրադարանը՝ թվով 1000 անուն տպագիր գրականություն, որն ամենահարուստն է Հարավային Կովկասում: Գրադարանը պարբերաբար համալրվում է ԵՄ ուսումնասիրությունների վերաբերյալ հեղինակավոր տպագրատների թողարկած գրականությամբ:

2007 թ. Հայաստանում ԵՄ պատվիրակությունը Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնին շնորհել է Եվրոպական տեղեկատվական կենտրոնի կարգավիճակ (Eui), ինչի արդյունքում Կենտրոնի տվյալների բազան պարբերաբար համալրվում է ԵՄ պաշտոնական հրատարակություններով, որի մեջ են մտնում ԵՄ պաշտոնական տեղեկագրերը, ԵՄ ինստիտուտների ընդունած նորմատիվ իրավական ակտերը, դրանց գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, վիճակագրական հետազոտությունները, ինչպես նաև ԵՄ իրականացրած ամեն մի քաղաքականության վերաբերյալ տեղեկատվական նյութերը:

**Գործընկերներն են՝**

- ՀՀ-ում ԵՄ պատվիրակությունը,
- ՀՀ կառավարությունը,
- ԵՄ Խորհրդատվական խումբը,
- ՄԱԿ-ի զարգացման միջազգային ծրագիրը,
- ԵԱՀԿ գրասենյակը Հայաստանում,
- Եվրոպայի խորհուրդը,
- Բրիտանական խորհուրդը,
- Եվրոպական շարժումը,
- ՄԶՄԿ,
- GTZ,
- USAID Armenia:

**Միջազգային համագործակցություն:** Իր գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու ու շահառուներին տրամադրվող ծառայությունների կատարելագործման նպատակով՝ կենտրոնը հաստատել է արդյունավետ համագործակցություն և գործընկերություն հետևյալ կրթական և գիտահետազոտական հաստատությունների հետ՝

- Սինսայի համալսարան,
- Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոց,
- Մարբուրգի համալսարան,
- Հանովերի համալսարան,

- Միդնեյի համալսարան,
- Կիևի Տարաս Շևչենկոյի Ազգային համալսարան,
- Բելառուսի պետական համալսարան,
- Եվրոպական ուսումնասիրությունների քաղաքագիտական և տնտեսագիտական համալսարան,
- LUISS համալսարան<sup>64</sup>:

## 2.2 | Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) ամեն մի քուլտը, դպրոց կամ ծրագիր ունի իր հետազոտական կենտրոնը: ՀԱՀ հետազոտական կենտրոնների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ անկախ գործունեության ոլորտից, նպատակներից, բոլորի հիմնական առաքելությունն է հնարավորություն տալ ուսանողին համալսարանում ստացած տեսական գիտելիքները վերածելու գործնական մշակումների: Մա համարվում է հետազոտական կենտրոնների ստեղծման գլխավոր նպատակը:

Սակայն ուսումնասիրելով այդ կենտրոնների գործունեությունը, նպատակներն ու առաքելությունը՝ կարող ենք փաստել, որ հետազոտական ոչ բոլոր կենտրոններն է հնարավոր ուղեղային կենտրոն համարել:

Ներկայացնենք ՀԱՀ-ի հետազոտական այն կենտրոնները, որոնց բնորոշ է ուղեղային կենտրոնների ոճը և մասնագիտացված են քաղաքական ոլորտի համար հանրային կարևոր որոշումների արտադրության գործում:

### 2.2.1. Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոն /ԹՀՀԿ/ (Turpanjian Center for Policy Analysis)

Թրփանճեան հասարակական հետազոտությունների կենտրոնը ստեղծվել է 1995 թ. ՀԱՀ-ի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դպրոցի կողմից: Հիմնական նպատակն է խթանել գիտելիքների և փոխըմբռնման ձևավորումը՝ անկողմնակալ և անկախ հետազոտությունների ու քաղաքական վերլուծության միջոցով՝ կիրառելով նորագույն մեթոդները: Կենտրոնի հեռանկարային նպատակն է ուղղակիորեն նպաստել, որ Հայաստանը դառնա ժողովրդավարական պետություն: ԹՀՀԿ-ը դա իրականացնում է Հայաստանի քաղաքականության մշակման գործընթացի բոլոր մասնակիցների համար բաց դռների ապահովման, կրթական, հետազոտական և վերլուծական աշխատանքների միջոցով:

Կենտրոնը դարձել է գիտական հանդիպումների վայր, որը, ինչպես Հայաստանում, այնպես էլ երկրից դուրս, զարգացման բացառիկ հնարավոր

<sup>64</sup> <http://www.ces.am/index.php/hy>

րություն է ընձեռում՝ երիտասարդ հետազոտողներին Հայաստանի քաղաքականության ձևավորման գործընթացում ներդրման նպատակով:

Հայաստանում ԹՀՀԿ-ն հայտնի է որպես տարբեր քաղաքական հիմնախնդիրների լուծմանն աջակցելու կարևորագույն ռեսուրս: ԹՀՀԿ-ի հետազոտողները ունեն գարգացման նախագծերի խիստ հանձնառություն:

Կենտրոնը տրամադրում է հետազոտական ծառայությունների ամբողջական փաթեթ՝ տվյալների որակական և քանակական վերլուծության համար անհրաժեշտ վստահելի և հիմնավորված մեթոդաբանություն, ցուցանիշների մշակում, հաշվետվությունների պատրաստում: Կենտրոնի աշխատակիցները փորձառու են հարցումների և հասարակական կարծիքի ուսումնասիրման, ֆոկլուս խմբերի, խորը հարցազրույցների, քաղաքականության և իրավական դաշտի վերլուծության և վիճակագրական վերլուծությունների կատարման նպատակով SPSS (Statistical Package for the Social Sciences) ծրագրի օգտագործման, գործընթացների տարբեր սցենարների մշակման մեջ<sup>65</sup>:

ԹՀՀԿ-ը հիմնականում աշխատում է միջազգային հասարակական կազմակերպությունների (հայաստանյան ներկայացուցչությունների), ինչպես նաև պետական կառույցների պատվերների շրջանակներում: Ընդ որում իրականացվող հետազոտություններին մեթոդաբանական, խորհրդատվական, ինչպես նաև հաշվետվությունների մշակման գործում աջակցություն են ցուցաբերում ինչպես պետական կառույցները, այնպես էլ միջազգային տարբեր կազմակերպությունները:

Հիմնական պատվիրատուներն են՝

- ԱՄՆ Միջազգային գարգացման գրասենյակը (ԱՄՆ ՄԶԳ) Հայաստանում (USAID),
- Ուրբան ինստիտուտը,
- Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակը,
- ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը,
- ԷկոՀայաստան դաշինքը,
- Կանանց իրավունքների կենտրոնը,
- ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը,
- Բաց հասարակության ինստիտուտը,
- Քառույթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչությունը,
- ՀՀ կենտրոնական բանկը:

<sup>65</sup> <http://tcpa.aul.am/what-we-do/>

ԹՀՀԿ-ի վերջին աշխատանքները կենտրոնացված են ժողովրդավարական համակարգի և տեղական ինքնակառավարման, երկրաշարժի գոտում բնակարանային քաղաքականության, ազգային մակարդակով օրենսդրական գործընթացների, մարդու և կանանց իրավունքների, ոչ կառավարական կազմակերպությունների զարգացման և ծխախոտի վերահսկման ոլորտներում:

Ամեն տարի ԹՀՀԿ-ն ներկայացնում է հետազոտական 3 ծրագրի հաշվետվություն:

2013 թ. իրականացվել է «ՀՀ համայնքների խոշորացման արդյունքում ակնկալվող ուղղակի և անուղղակի ծախսերի և օգուտների մոտարկված հաշվարկ» հետազոտությունը: Ընդ որում հետազոտության իրականացմանն աջակցություն են ցուցաբերել «Մենեջմենթ Փարթներս» Ամերիկյան խորհրդատվական ընկերությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Հետազոտությունն իրականացվել է Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության պատվերով:

ԹՀՀԿ-ը (2012 թ. հոկտեմբերից – 2013 թ. հոկտեմբեր) իրականացրել է՝ Ֆրայբուրգի համալսարանի Շվեյցարական ակադեմիական կովկասյան ցանցի (ASCN, Academic Swiss Caucasus Net) հիմնադրած՝ «Հայաստանի քաղաքացիական հասարակությունը անցումային 20 տարիներից հետո. դեռևս հետ սոցիալիստական» հետազոտական ծրագիրը: Ծրագրի նպատակը Հայաստանում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ամրապնդման գաղափարների մշակումն է:

Կենտրոնը անցումային քաղաքականության ցանցի՝ (Transition Policy Network) Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ հետազոտական ինստիտուտների կոնսորցիումի անդամ է, որոնց հետ համագործակցում է քաղաքականության բարեփոխումներին առնչվող հարցերում:

Իր տարբեր նախագծերում Կենտրոնը կարող է հիմնվել Հումանիտար և սոցիալական գիտությունների քոլեջի հիմնական և հրավիրյալ դասախոսների փորձի վրա: Բացի հետազոտողների հիմնական անձնակազմից, Կենտրոնը հյուրընկալում է հետազոտող գիտաշխատողների և հրավիրյալ գիտնականների ինչպես ԱՄՆ-ից, այնպես էլ Եվրոպայից:

ԹՀՀԿ-ն, կարճ ժամկետով աշխատանքի է ընդունում Քոլեջի ուսանողներին և շրջանավարտներին՝ որպես հետազոտական նախագծերի մասնակիցների, դրանով իսկ ապահովելով այս ոլորտում արևմտյան ոճի վերլուծություններին բնորոշ անմիջական մասնակցության հնարավորություն:

Կենտրոնն ուսանողներին և շրջանավարտներին հնարավորություն է տալիս մասնակցել ՀՀ իրավական, սոցիալական և քաղաքական բնագավառների բազմակողմ կիրառական հետազոտություններին: ԹՀՀԿ-ն ապահովում է գործնական հետազոտությունների փորձ, որոնք հնարավորություն

են ընձեռում Դայրոցի լավագույն ուսանողներին և շրջանավարտներին զարգացման նախագծերում անմիջաբար կիրառել տեսական այն հասկացություններն ու հմտությունները, որոնք նրանք սովորել են լսարանում: Ուսանողները հետազոտություններում ներգրավվելու համար պետք է ունենան լավ ակադեմիական ցուցանիշներ:

Ինչպես նշում է ԹՀՀԿ-ի հետազոտող Վալենտինա Գևորգյանը, բացառապես ուսանողներից բաղկացած հետազոտական խմբեր կազմվում են հարցազրույցների անցկացման, վիճակագրական տվյալների հավաքագրման նպատակով: Հարցումներ անցկացնող ուսանողներն աշխատում են օրավարձով (20–30 ԱՄՆ դոլար): Ուսանողական խմբերը, սովորաբար, բաղկացած են լինում 10–20 ուսանողներից: Ընթացիկ ուսանողական խումբը բաղկացած է 6 անդամից: Ուսանողները ներգրավվում են հետազոտական աշխատանքներում նաև որպես հետազոտողի օգնական: Ընդ որում, այս դեպքում ուսանողների աշխատավարձը շատ հաճախ փոխանցվում է համալսարանին՝ որպես ուսման վճարի մի մասի փոխհատուցում:

Կենտրոնը շահույթ չհետապնդող, անկախ կազմակերպություն է և ֆինանսավորվում է հիմնականում Ջերրի Թրփանճեանի ընտանիքի (Jerry Turpanjian Family) նվիրատվությունների, ինչպես նաև այնպիսի կազմակերպությունների դրամաշնորհների միջոցով, ինչպիսիք են Ուրբան ինստիտուտը, զարգացման ասոցիացիաները, Համաշխարհային բանկը և ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունը: Ֆինանսավորման առումով աջակցություն է ցուցաբերում նաև համալսարանը:

### ***2.2.2. Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր***

Ամերիկյան համալսարանի Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը Հայաստանի և ԼՂ-ի գյուղական բնակավայրերի բնակչությանն ապահովում է կրթությամբ և գյուղական համայնքների զարգացումը խրախուսելու տնտեսական հնարավորություններով, ստեղծում աշխատատեղեր և բարելավում համայնքների վիճակը: Այս ծրագրի օժանդակությամբ 25–65 տարեկան գյուղական ռեզիդենտները հիմնել են տարբեր ձեռնարկություններ՝ ավտոմեքենաների սպասարկման կետեր, մանրածախ խանութներ և ինտերնետ ակումբներ:

2006 թ. Հերալդ Թրփանճեանը (Gerald Turpanjian) գյուղական բնակավայրերի զարգացումը խրախուսելու նպատակով ՀԱՀ-ին նվիրաբերեց 5 մլն դոլար: Արդյունքում ստեղծվեց գյուղական ձեռնարկատերերին կրթությամբ և օժանդակությամբ ապահովելու այս ծրագիրը, որը գյուղական ձեռնարկատերերին առաջարկում է թրեյնինգ, ֆինանսական օժանդակություն (տրամադրում էժան վարկեր, հանդես գալիս որպես երաշխավորող և այլն) և խորհրդատվություն:



### 2.2.3. Հակոբյան բնապահպանական կենտրոն (Acopian Center for the Environment)

Կենտրոնը հիմնադրվել է 1992 թ. Սարգիս Հակոբյանի կողմից: Կենտրոնի նպատակն է պաշտպանել ՀՀ կենսաբազմազանությունն ու բնական ռեսուրսները՝ հետազոտությունների, կրթության և հասարակական ներգրավման միջոցով: 2008 թ. Շրջակա միջավայրի պահպանության հետազոտական կենտրոնը վերանվանվեց Հակոբյան բնապահպանական կենտրոնի (Acopian Center for the Environment-ACE): Կենտրոնում մշակվող նախագծերն ընդգրկում են թեմաների լայն շրջանակ՝ թռչունների և թիթեռների հետազոտություններից մինչև վայրի բույսերի տեսակների պահպանում և դրանց պահպանման կրթություն:

Կենտրոնի առաքելությունն է նպաստել ՀՀ բնական միջավայրի պահպանմանը՝ հետազոտությունների, կրթության և հանրային իրազեկման միջոցով:

Այդ նպատակին հասնելու համար կենտրոնը՝

1. **նպաստում է** շրջակա միջավայրի պաշտպանությանը, որն անհրաժեշտ է Հայաստանի կենդանական և բուսական հարուստ աշխարհի պահպանության համար,
2. **սովորեցնում, կրթում է** ՀԱՀ-ի և հայաստանյան մյուս բուհերի ուսանողներին Հայաստանի կենսաբազմազանության և դրա պահպանման կայուն լուծումների զարգացման կարևորության մասին,
3. **համագործակցում է** այլ բնապահպանական խմբերի հետ՝ խրախուսելու տեղական, տարածաշրջանային և գլոբալ կոոպերացիան՝ Հայաստանի շրջակա միջավայրի պահպանման համար:

**Անձնակազմը:** Կենտրոնն ունի 11 աշխատակից, որից 4՝ հետազոտող և 2 ուսանող օգնական:

**Ֆինանսավորումը:** Կենտրոնը ֆինանսավորվում է հիմնականում դոնորների նվիրատվություններից: Կատարվող նվիրատվություններն ամբողջովին ազատվում են հարկերից: Ընդհանուր նվիրատվություններ կարելի է կատարել 25–10000 դոլարի չափով: Կան նաև առանձին նախագծեր, որոնց համար նվիրատվության չափը ֆիքսված է: Օրինակ՝ «Թռչուններն՝ իմ բակում» 10–14 տարեկան աշակերտների ուսուցման ծրագրի նվիրատվության չափը 100 դոլար է, Երևանի հազվագյուտ «բնակիչ» Եվրոպական Ճնդհաճուռակի (Levant Sparrowhawk) ուսումնասիրությանը և պաշտպանությանն աջակցելու նվիրատվության գումարը 250 դոլար է<sup>66</sup>:

Կենտրոնը հրապարակում է գրքեր, հոդվածներ, ուղեցույցներ և քարտեզներ:

<sup>66</sup> <https://www.acopiancenter.am/products.asp?cat=12>

2009 թ. իրականացվել է Հրազդան քաղաքից 2 կմ հեռավորությամբ կառուցվող մետաղամշակման գործարանի հետազոտությունը՝ Հրազդան քաղաքի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ<sup>67</sup>: 2013 թ. ապրիլին Կենտրոնը ՀԱՀ-ի բիզնեսի և տնտեսագիտության քոլեջի հետ համատեղ իրականացրել է ուսումնասիրություն, ըստ որի 2004–2010 թվականներին հանքարդյունաբերությունը Հայաստանում նպաստել է տնտեսական աճին՝ միաժամանակ հանգեցնելով եկամուտների անհավասար բաշխմանը և աղ-քատությանը<sup>68</sup>:

#### **2.2.4. Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոն (The Center for Health Services Research and Development)**

Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնը կիրառական հետազոտությունների կենտրոն է, տեղակայված ՀԱՀ-ի առողջապահական գիտությունների քոլեջում: Հիմնադրվել է 1995 թ. ի պատասխան Հայաստանի հանրային առողջապահության ոլորտում հետազոտությունների և մշակումների անհրաժեշտության<sup>69</sup>: Տեղակայված է քոլեջում, որը Հանրային առողջապահության մագիստրատուրայի ծրագիր է, որն էլ, իր հերթին, փոխկապակցված է Բլումբերգի հանրային առողջապահության դպրոցի հետ:

Կենտրոնը հետազոտական գործընթացի և զարգացման ծրագրի պրակտիկ փորձ է առաջարկում Քոլեջի ուսանողներին և շրջանավարտներին՝ միևնույն ժամանակ ծառայություն մատուցելով Հայաստանին և տարածաշրջանին:

Կենտրոնի երկարաժամկետ ջանքերի արդյունքն է Կարո Մեդրիկյանի անվան կանխարգելիչ ակնաբուժության կենտրոնը: Մեդրիկյան կենտրոնի գերնպատակը խուսափելի կուրության կանխարգելումն է: Մինչ օրս կենտրոնը իրականացրել է ակնաբուժական բազմաթիվ ծրագրեր Հայաստանում և Արցախում: Այն կազմակերպել է կուրության կանխարգելմանն ուղղված հանրային և մասնագիտական տարբեր կրթական սեմինարներ և գիտաժողովներ, հրատարակել բազմաթիվ գիտահետազոտական աշխատանքներ<sup>70</sup>:

Կենտրոնի հետազոտական անձնակազմը առաջարկում է փորձ՝ աջակցելու գոյություն ունեցող առողջապահական ենթակառուցվածքին և

<sup>67</sup> <http://www.ecolur.org/hy/news/air/proposed-hrazdan-metal-processing-plant-poses-environmental-hazards/402/>

<sup>68</sup> [http://newsroom.aua.am/files/2013/04/mining\\_grigoryan.pdf](http://newsroom.aua.am/files/2013/04/mining_grigoryan.pdf)

<sup>69</sup> <http://auachsr.com/>

<sup>70</sup> <http://www.nt.am/am/news/187044/>

պետական ու մասնավոր հատվածում առողջապահական ծառայությունների որակի բարելավմանը: Կենտրոնն ուղղորդող սկզբունքներն են՝

1. ապահովել ՀԱՀ հանրային առողջապահության մագիստրատուրայի ծրագրի ուսանողներին հետազոտությունների և ծրագրերի զարգացման ուսուցմամբ,
2. ծառայել որպես մի վայր, որը կկապի ՀՀ առողջապահության նախարարությանը մարդասիրական կազմակերպությունների և այլ ինստիտուտների և գործակալությունների հետ,
3. տեխնիկական աջակցություն ցուցաբերել հայաստանյան նախարարություններին և հետազոտական կենտրոններին,
4. մարզերում հայաստանյան նախարարությունների հետ համատեղ աջակցել առողջապահական ծառայությունների զարգացմանը,
5. տեխնիկական աջակցություն ցուցաբերել միջազգային կազմակերպություններին, որոնք հետաքրքրված են երկրում առողջապահական ծրագրերի գնահատմամբ և իրականացմամբ:

Բազմաթիվ կազմակերպություններ կնքել են Կենտրոնի հետ համատեղ ծրագրերի իրականացման ծառայությունների մատուցման գործարք: Գրանցից կարելի է նշել՝

- Հայ բժշկական համաշխարհային վարչությունը,
- Ամերիկյան Միջազգային «Կարմիր խաչ»-ը,
- Ջորջթաունի համալսարանի Վերարտադրողական առողջության ինստիտուտը,
- Բաց հասարակության ինստիտուտը (OSI),
- Փենսիլվանիայի համալսարանում Բուժքույրերի դպրոցը (School of Nursing)
- ՅՈՒՆԻՍԵՖ-ը,
- ԱՄՆ Միջազգային Զարգացման Գրասենյակը (ԱՄՆ ՄԶԳ) Հայաստանում /USAID/,
- Վորլդ Վիժն Հայաստանը:

Կենտրոնը պարբերաբար հանրային առողջապահության ոլորտին առնչվող սեմինարներ է անցկացնում: Սեմինարներին մասնակցում են նաև այլ երկրների մասնագետները, որոնք ներկայացնում են իրենց երկրի առողջապահական համակարգի առանձնահատկությունը, իրենց փորձը փոխանցում քոլեջի ուսանողներին: Ամեն տարի հրապարակում է 5–10 հետազոտական զեկույց, մեկ կամ երկու ուսումնական նյութեր, գրքեր, 4–5 հոդված, մոտ 10 թեզիսներ:

Կենտրոնի նախագծերից է Առաջնային առողջապահության բարեփոխումների նախագիծը (USAID), Հանրային առողջապահության ծառայությունների գնահատումը և վերակառուցումը (Առողջապահության համաշ-

խարհային կազմակերպություն), Ծխախոտի վերահսկման նախագիծը և այլն:

Կենտրոնն ունի 13 աշխատող, որից 7-ը հետազոտողներ են:

**2.2.5. Հայաստանի ամերիկյան համալսարան,  
Գործարար հետազոտման և զարգացման կենտրոն  
/The Center for Business Research and Development/**

ԳՀԶԿ-ը հիմնադրվել է 1992 թ.՝ Հայաստանի տնտեսական զարգացումը շուկայական տնտեսության անցման փուլում խթանելու նպատակով: ԳՀԶԿ-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, հիմնական դոնորն է Էդ Ավետիսյանի ընտանիքը (Ed Avedissian family), դրամաշնորհներ է ստանում նաև մասնավոր և պետական կազմակերպություններից: Կենտրոնը ղեկավարում է Գործարարության և տնտեսագիտության քոլեջը:

Կենտրոնը դասախոսական կազմի, տեղի փորձագետների, շրջանավարտների և մագիստրանտների միջոցով իրականացնում է հետազոտական և զարգացման համակարգված ծրագրեր: Սա գիտական հանդիպումների մի վայր է, երիտասարդ հետազոտողների զարգացման եզակի հնարավորություն, հիմնական նպատակն գործարար որոշումների կայացման և ռազմավարական գործընթացներում ներդրում անելն է:

ԳՀԶԿ-ը տեղեկատվության և փորձի աղբյուր է ինչպես ներքին, այնպես էլ արտասահմանյան կազմակերպությունների համար:

Կենտրոնը, առաջին հերթին, ապահովում է Արևմտյան կենտրոններին բնորոշ հետազոտական և խորհրդատվական ծառայություններ՝ գործարարության և կառավարման ոլորտներում Հայաստանում և տարածաշրջանում: Կենտրոնի գործընկերներն են Synopsys Armenia-ն, Էջմիածին եկեղեցին, Նորք Մարաշ բժշկական կենտրոնը, Կոտայք գարեջուրը:

**Ծառայություններ:** Կենտրոնը նախագծում և իրականացնում է բազմաբնույթ ուսումնասիրություններ և հետազոտական նախագծեր, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում գործարար վերլուծությամբ և պլանավորմամբ, մեկնարկային նախաձեռնությունների տեխնիկատնտեսական հիմնավորվածությամբ (feasibility studies for business start-ups), շուկայի հետազոտությամբ և վերլուծությամբ, ճյուղային (արդյունաբերության) վերլուծությամբ, ֆինանսական վերլուծությամբ, արտադրության պլանավորման և օպտիմալացմամբ, հաշվապահական ծառայություններով, ինչպես նաև վերապատրաստման ծրագրերի իրագործմամբ:

Կենտրոնը տրամադրում է ամբողջական հետազոտական ծառայություններ սկսած վստահելի միջոցների և ցուցանիշների մշակումից մինչև քանակական և որակական տվյալների ամբողջական վերլուծություն և հաշվետվության կազմում:

Կենտրոնի աշխատակիցները հմուտ են ընտրանքային հետազոտության և մեթոդաբանության, ֆոկուս խմբերի, խորքային հարցազրույցների (in-depth interviews) և SPSS-ի՝ վիճակագրական վերլուծության ասպարեզում:

Կենտրոնը հնարավորություն է տալիս լավագույն ուսանողներին իրենց տեսական գիտելիքները կիրառել զարգացման նախագծերում:

Այսպիսով, ՀԱՀ-ի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ՈՒԿ-ները (հետազոտական կենտրոնները, թեպետ ամեն մի ֆակուլտետ ունի հետազոտական կենտրոն, սակայն ոչ բոլորն են ՈՒԿ) ղեկավարվում, կառավարվում են տվյալ ոլորտը ներկայացնող ֆակուլտետների, ամբիոնների կողմից: Բացի դրանից ուսանողները լայնորեն մասնակցում են հետազոտություններին՝ գործնականում կիրառելով համալսարանում ստացած տեսական գիտելիքները գործնական հետազոտություններում: Սակայն ուսանողները ինքնուրույն հետազոտություններ չեն իրականացնում և հանդես են գալիս որպես հետազոտողի օգնական՝ այս ընթացքում ստանալով որոշակի փորձառություն:

ՈՒԿ-ները հիմնականում ֆինանսավորվում են բարեգործական կազմակերպություններից: Համատեղ ծրագրեր են իրականացնում Հայաստանյան և արտերկրի տարբեր կազմակերպությունների, հաճախ նաև նախարարությունների հետ: Այս կենտրոնների հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն և նախարարությունները դրանք հաշվի են առնում համապատասխան քաղաքականություն մշակելիս:

### 2.3 | Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի տարածաշրջանային հետազոտությունների գիտական կենտրոն

*Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի տարածաշրջանային հետազոտությունների գիտական կենտրոնը:* Կենտրոնի գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղություններն են.

1. տարածաշրջանում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական իրավիճակի զարգացման միտումների վերհանում,
2. տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային երկրների միջև միջպետական հարաբերությունների ամբողջ սպեկտրի հետազոտում,
3. տարածաշրջանի երկրների՝ ԵՄ ինտեգրման խնդիրների ու հեռանկարների հետազոտություն,
4. Հայաստանի՝ որպես Մերձավոր Արևելքը Արևմուտքի հետ կապող միջքաղաքականության օղակի դերի հետազոտություն,

5. հայ-վրացական տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունների զարգացման ներուժի ուսումնասիրություն,
6. տարածաշրջանում էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման եղանակների, զարգացման միտումների և աղբյուրների լուսաբանում,
7. տարածաշրջանի երկրների ժողովրդագրական կերպափոխությունների բազմավեկտոր ուսումնասիրություն,
8. տարածաշրջանում տնտեսական և քաղաքական իրավիճակի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների կազմում և համապատասխան գերատեսչություններին և կառույցներին խորհրդատվության տրամադրում վերլուծական փաստաթղթերի՝ երկտողների և զեկույցների ձևով:

Տետագոտական նախագծերը ներառում են.

- Հայ-վրացական տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացման հեռանկարները:
- Հայաստանը՝ որպես Մեծ Մերձավոր Արևելքի քրիստոնեական երկիր:
- Հարավային Կովկաս. միասնական կամ հատվածական տարածաշրջան:

Աշխատելառճը՝

- գիտական կոնֆերանսների, կլոր սեղանների և սեմինարների անցկացում,
- գիտական հրապարակումների պատրաստում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, մագիստրոսների և բակալավրի ուսանողների ներգրավում,
- հայ-սլավոնական համալսարանի տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի կայքում վերլուծական հետազոտությունների և զեկույցների զետեղում,
- դասախոսությունների կազմակերպում առաջատար հայրենական և արտասահմանյան քաղաքական ու հասարակական գործիչների, գիտնականների, գործարարների և փորձագետների մասնակցությամբ,
- հայրենական և արտասահմանյան գիտահետազոտական, ուսումնական և վերլուծական կենտրոնների հետ կապերի հաստատում և զարգացում,
- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն:

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՆԵՐԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԿ-ՆԵՐՈՒՄ

Ամենայն հավանականությամբ՝ ուղեղային կենտրոններն ու համալսարանները միավորված են եղել իրենց ստեղծման օրվանից: Եվ սա զարմանալի չէ, քանի որ ուղեղային կենտրոնների կազմավորումը համալսարանի շրջանակներում ունի մի շարք առավելություններ:

ՈՒԿ-ի և համալսարանի գործակցության ամենակարևոր պարագան տարածքն է: Համալսարաններում տեղակայված՝ ՈւԿ-ներն ապահովվում են անշարժ գույքով, տարածքով, աշխատասենյակներով, որոնք էապես նվազեցնում են լրացուցիչ անհարմարություններն ու ծախսերը, ինչպես նաև համալսարանականակադեմիական միջավայրով:

Հետազոտությունների նկատմամբ համատեղ հետաքրքրությունը հանգեցրել է համագործակցության այլ խթանների ձևավորմանը: Հետազոտությունների համար կարևոր է գրադարանների և ամսագրերի հասանելիությունը: Եվ այդ ֆինանսական միջոցները, որը ՈՒԿ-ն խնայում է ենթակառուցվածքների վրա, կարող են ներդրվել հետազոտական նախագծերում:

ՈւԿ-ի ֆինանսական կայունությունը աշխատանքների արդյունավետ կազմակերպման առանցքային գործոնն է: Եթե ՈՒԿ-ն չունի կայուն երկարաժամկետ հիմնական ֆինանսական աջակցություն, հարկադրված է պայքարելու «ուղեղներին» /տաղանդավոր հետազոտողներին/ պահելու համար: Այս առումով ՈՒԿ-ում և համալսարանում համատեղ աշխատանքը կարող է պահել որակավորված առաջատար հետազոտողներին և հեշտացնել նրանց ներգրավումը հետազոտական աշխատանքներին: Ընդհատվող, ոչ պարբերական ֆինանսավորումը խնդիրներ չի կարող ստեղծել, օրինակ՝ այնպիսի ՈՒԿ-ի համար, ինչպիսին Հուվերն է, սակայն սա բավական լուրջ խնդիր է զարգացող երկրների, այդ թվում Հայաստանի նորաստեղծ ՈՒԿ-ի համար: Այլ կերպ համալսարանը անուղղակիորեն կարող է աջակցել ՈՒԿ-ին:

Դրա հետ մեկտեղ համալսարանի համար կան բազմաթիվ առավելություններ. ՈՒԿ-ները նպաստում են հանրային երկխոսությանն ու քաղաքական քննարկումներին այն չափով և ծավալով, որով համալսարանները չեն կարող: Առանձին խնդիրների ուսումնասիրության մեջ ներքաշվելը համալսարանի առաքելությունից դուրս է: Գիտնականները քաղաքական հիմնարար խնդիրներից խուսանալով են, իսկ դասախոսները ներքաշված չեն քաղաքական որոշակի հիմնախնդիրների խորը և համապարփակ հետազո-

տությունների մեջ: Թեև հետազոտություններ կատարվում են, սակայն դրանք պարբերական չեն. այս առումով ՌԻԿ-ը, ունենալով անձնակազմ, կարող է վերլուծել անհրաժեշտ տվյալները, իրականացնել փորձագիտական գնահատումներ և այլն: ՌԻԿ-ի հաջողված աշխատանքը ներդրվում է ուսումնական գործընթացում՝ դարձնելով համալսարանն ուսանողների համար առավել գրավիչ:

ՌԻԿ-ը կարող է նվազագույն միջոցներով հասնել լուրջ արդյունքների, ձեռք բերել հասանելիություն, հնարավորություն տալ ուսանողներին տեսական գիտելիքները հարստացնել կիրառական մշակումներով, դրանով իսկ համալսարանը դարձնել առավել հայտնի: Այս բոլոր առավելություններով, նախընտրություններով ու գրավչություններով հանդերձ՝ ոչ բոլոր ՌԻԿ-ներն են տեղակայված համալսարաններին կից: Այստեղ կան մի շարք խոչընդոտներ և մարտահրավերներ:

Առաջին, ՌԻԿ-ը պետք է ապահովի իր անկախությունը: Սա կարող է խնդիր դառնալ հատկապես որոշակի քաղաքական մոայլ համատեքստում: Բուհական ՌԻԿ-ները դառնում են հաստատապես խոցելի, երբ կատարած հետազոտությունների արդյունքները հակասում են համալսարանի որդեգրած քաղաքականությանը, շահերին ու հետաքրքրություններին: Թեպետ սա կարող ենք տարածել ոչ միայն համալսարանական, այլև համալսարաններից դուրս գործող ՌԻԿ-ների վրա: Սակայն ենթադրվում է, որ համալսարանին ավելի քիչ ինտեգրված ՌԻԿ-ն նորարարությունների ստեղծման և քաղաքական երկխոսությունների ձեռնարկման ավելի մեծ հնարավորություն ունի:

Ամփոփելով՝ կարող են նշել, որ ՌԻԿ-երի՝ համալսարանում տեղակայման բավական լուրջ փաստարկներ կան, հատկապես զարգացող երկրներում, որտեղ միջոցները զգալիորեն սուղ են, իսկ քաղաքական մտածողությունը՝ ճնշված: Ամեն դեպքում, ՌԻԿ-ը համալսարանի զարգացման կարևոր խթան կարող է լինել և նպաստել համալսարանի գիտական վարկանիշի բարձրացմանը:

Այդուհանդերձ, ինչպես հայտնի ասացվածքում է արդարացիորեն նշվում. «Լավ ցանկապատները ստեղծում են լավ հարևաններ»: Կա որոշակի ռիսկ, որ ՌԻԿ-ի գործունեության կարևորագույն արժեքները (ազնվություն, պատասխանատվություն քաղաքական համատեքստում, ճկունություն) կարող են «խեղդվել», եթե համալսարանը ՌԻԿ-ին շատ ամուր «գրկի»: Վերջապես, դոնորները կարող են լինել կառուցողական միջնորդներ՝ հաղորդելով իրենց փորձը, ապահովելով արտաքին աջակցություն և ամրապնդելով կառավարումը, մինչև որ ՌԻԿ-ի ինքնակարգավորման կառուցակարգերը կյանքի կկոչվեն:



Ուղեղային կենտրոնները հնարավոր է օգտագործել նաև գնահատելու այն գաղափարների օգտակարությունն ու իրավաչափությունը /օրինակա-նությունը/, որոնք կազմում են պետական կամ մունիցիպալ քաղաքականու-թյան հիմքը, ինչպես նաև՝ սկզբունքորեն նոր գաղափարներ մշակելու հա-մար, որոնց վրա կարող են հիմնվել երկրի կամ դրա որևէ տարածաշրջանի զարգացման հեռանկարները: Հարկ է նաև նշել, որ երկրում կադրային «քաղցի» պայմաններում ՌԻԿ-ներին բաժին է ընկնում նաև պետական ու մունիցիպալ մարմինների համար որակյալ կադրեր ապահովելը:

ՌԻԿ-ների զարգացման պատմությունը ցույց է տալիս նաև, որ դրանք ոչ միայն վերլուծական և խորհրդատվական գործունեություն են իրականաց-նում, այլև իրենց իսկ մշակած գաղափարների տարածողներն են, «լոբբիստ-ները»:

Դիտարկելով համալսարաններին կից ՌԻԿ-ների ստեղծման դրական կողմերն ու մարտահրավերները, ինչպես նաև հենվելով սույն հետազոտու-թյան առաջին երկու մասերի վերլուծության վրա, կարող ենք առաջարկել հետևյալ միջոցառումների ներդրումն ու իրականացումը հայաստանյան հա-մալսարանական ՌԻԿ-ներում.

- **Հրապարակումներ:** Բնականաբար, առաջատար ՌԻԿ-ները տնօ-րինում են գիտական և ֆինանսական հզոր բազայի, ինչը հնարավորություն է տալիս բավական մեծաքանակ հետազոտություններ իրականացնելու: Առաջատար կենտրոնների կայքերում ամեն օր կարելի է գտնել խմբագրա-կան կարծիք, 2–3 ամիսը մեկ հրատարակվում են պարբերականներ, տարե-կան 3–5 հաշվետվություններ: Սակայն հրապարակումների քանակությունը դեռևս ՌԻԿ-ի բարձր վարկանիշի գրավականը չէ: Օրինակ՝ Լոնդոնի տնտե-սագիտության և քաղաքական գիտությունների դպրոցի Հանրային քաղա-քականության խմբի հրապարակումների քանակը մեծ չէ, սակայն համար-վում է աշխարհի լավագույն ուղեղային կենտրոններից մեկը:

Հայաստանյան ՌԻԿ-ներից շատերի հետազոտությունների հրատա-րակման հստակ պարբերականություն չկա: Ցանկալի կլինի, իհարկե, որ դրանք հրապարակվեն որոշակի պարբերականությամբ, ինչը բնականա-բար, կապացուցի ՌԻԿ-ների կանոնավոր գործունեությունը: Սակայն քա-նակն այստեղ էական չէ: Կարևոր են հետազոտությունների արժեքը և դրանց ազդեցությունը երկրի քաղաքական գործընթացների վրա: Բնակա-նաբար, մեր կենտրոններն ի վիճակի չեն ապահովելու մեծ քանակությամբ որակյալ հետազոտություններ, ուստի հարկ է ուշադրության կենտրոնում պահել դրանց որակը՝ աստիճանաբար ավելացնելով քանակը: Այս առումով հարկ է նշել, որ ՀԱՀ-ի կենտրոնները տարեկան 2-3 հաշվետվություն են ներ-կայացնում, որոնք, սակայն, քաղաքական որոշումների ընդունման վրա ազդեցություն են ունենում: Օրինակ, ՀՀ Կառավարության 2011 թ. հունիսի

17-ի N23 որոշման հիմքերով իրականացվող «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագիրը մշակվել է ներկա իրավիճակի գնահատման համար՝ հիմք ընդունելով 2007 թ. Թուրքիանյան հասարակական հետազոտությունների կենտրոնի՝ «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում» հետազոտության տվյալները<sup>71</sup>:

• **Աշխատակազմ:** Համալսարանական ՈՒԿ-ի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ օգտագործվում է համալսարանի գիտական ներուժը: Առաջատար ուղեղային կենտրոնների աշխատակազմը, սակայն, չի սահմանափակվում միայն համալսարանի գիտական ներուժով: Առաջատար բոլոր կենտրոններն ունեն դրսից ներգրավված մասնագետներ, ընդ որում դրանք պետական հատվածի ներկայացուցիչներ են ու քաղաքական գործիչներ, որոնք քաղաքական գործընթացներում կարևոր դերակատարում ունեն՝ ոչ միայն իրենց երկրում, այլև ամբողջ աշխարհում:

Հետազոտողների քանակը մեծապես տարբերվում է ՈՒԿ-ներում: Օրինակ՝ Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցի, Հանրային քաղաքականության խումբ ուղեղային կենտրոնն ունի 36 հետազոտող, մինչդեռ Հուվերի իստիտուտը՝ մոտ 170 հետազոտող, Մոլորակի ինստիտուտը՝ 850 գիտնական, Ջարգացման հետազոտությունների ինստիտուտը՝ 100: Հայաստանյան համալսարանական ՈՒԿ-ների աշխատակիցների թվաքանակը համեմատաբար փոքր է՝ 10–50 աշխատակից: Համեմատության համար նշենք, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնում հիմնական աշխատակազմն ու համատեղ հետազոտողների թիվը շուրջ 90 է:

Պետք է նշել, որ հետազոտողների թիվը այստեղ էական դեր չի խաղում, մինչդեռ նրանց գիտական մակարդակը և, հատկապես, պետական հատվածում ներգրավվածությունը «ուղեղային կենտրոն» երևույթի կարևորագույն չափանիշն է: Առաջատար ՈՒԿ-երը շատ հաճախ ձևավորում են հետազոտական խումբ, որն ընդգրկում է հրավիրյալ, գործնական ոլորտում աշխատող մասնագետների և համալսարանի պրոֆեսորների: Մրա նպատակը գործնական և տեսական կողմերի համադրումն է հետազոտությունն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Այս գործելակերպը շատ նպաստավոր կարող է լինել հետազոտությունների որակի բարձրացման և քաղաքականության ոլորտում դրա ազդեցության տեսանկյունից: Այս առումով մենք լուրջ խնդիր ունենք, քանի որ գիտաշխատողների հետազոտությունները շատ հաճախ տեսական բնույթի են, չունեն առաջարկների գործնական կիրառության հստակ մեխանիզմներ:

<sup>71</sup> [http://www.gov.am/u\\_files/file/kananc-xorh/Ynddem%20brnutyan%202011-2015%20programm\(1\).pdf](http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brnutyan%202011-2015%20programm(1).pdf), էջ 3:

Գործնական ոլորտում էլ որոշումները հաճախ գիտականորեն հիմնավորված չեն: Փորձի փոխանակումը շատ կարևոր է: Այս առումով կարելի է առանձնացնել միայն ՀԱՀ-ի ՈՒԿ-ները և ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը, որոնց հետազոտական խմբերում ընդգրկված են արտասահմանյան փորձագետներ և հետազոտություններ են իրականացնում համալսարանի դասախոսների, ինչպես նաև ուսանողների հետ համատեղ:

Ընդհանուր առմամբ՝ մենք ունենք կադրային հիմնախնդիր: Թեև ավանդաբար ունեցել ենք գիտական զգալի ներուժ՝ այսօր ցավոք, այն զգալիորեն նվազել է: Հայաստանը մարդկային կապիտալի լուրջ կորուստներ է կրել, ինչն ավելի է սրվում արտագաղթի և «ուղեղների արտահոսքի» պայմաններում:

Այս առումով արդյունավետ միջոցառում կարող է լինել **պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավումը**: Փորձը ցույց է տալիս, որ ուղեղային կենտրոնները հաճախ այն ինստիտուցիոնալ միջավայրն են, որտեղ իրենց գիտելիքներն ու փորձը կարող են ներդնել պետական կամ մունիցիպալ կառավարման համակարգում, միջազգային այս կամ այն կազմակերպությունում աշխատած և իրենց պաշտոնից հեռացած անձինք՝ միաժամանակ շարունակելով մնալ քաղաքականության խնդիրների քննարկման ակտիվ մասնակից:

• **Ֆինանսավորում:** ՈւԿ-ների ստեղծման առանցքային հարցերից մեկը ֆինանսավորման և **ֆինանսական անկախության** ապահովման խնդիրն է: Համաշխարհային փորձը ցույց է տալիս ֆինանսական միջոցների ներգրավման մի շարք ուղիներ, որոնցից են՝ արտասահմանյան հիմնադրամը /գրանտ/, պետական կամ մասնավոր ֆինանսավորումը, պայմանագրային հետազոտությունները, հրապարակումների և ծառայությունների վաճառքը և այլն: Կարևոր խնդիր է ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը՝ որևէ մեկ աղբյուրից կախվածությունը բացառելու համար: Սա հնարավորություն կտա ուղեղային կենտրոնին ավելի անաչառ գտնվել հետազոտությունների ընթացքում՝ հավատարիմ մնալով անկողմնակալ գաղափարներ և մտավոր արտադրանք թողարկող կազմակերպության կոչմանը:

Պետք է նշել նաև, որ առաջատար ուղեղային կենտրոնները կիրառում են ֆինանսական միջոցների ներգրավման տարբեր գործիքներ: Սակայն դրանց խթաններն անմիջականորեն առնչվում են պետության իրականացրած քաղաքականությանը: Ֆինանսավորման խթանները հիմնվում են ազգային /մասնավորապես, հարկային/ օրենսդրության վրա: Օրինակ՝ գնահատված արժեթղթերը /Appreciated Securities/ ենթադրում են, որ երկարաժամկետ իրացվելի արժեթղթերի նվիրատվությունը ապահովում է դոնորին հարկային արտոնություններով, իսկ ՈՒԿ-ին՝ բարեգործական աջակցու-

թյամբ: Իսկ պլանավորված նվիրատվության դեպքում անձը որոշում է նվիրատվություն կատարել ապագայում կամ իր մահվանից հետո: Պլանավորված նվիրատվությունը ապագա նվիրատվություն կատարելու վճիռն է՝ օրինական պայմանագրով հաստատված կարգով: Տվյալ նվիրատվությունները, եկամուտները դոնորին ազատում են հարկերից կամ էլ ամբողջ կյանքի ընթացքում ապահովում են տարեկան եկամտային հոսքեր ՈւԿ-ից: Գոյություն ունեն պլանավորված նվիրատվության բազմաթիվ այլ տեսակներ, սակայն պետք է նշել, որ այս տիպի նվիրատվությունները հիմնվում են ԱՄՆ-ի հարկային օրենսդրության վրա, իսկ Կանադան, Միացյալ Թագավորությունը և Եվրոպական մի շարք երկրներ գտնվում են այդպիսի օրենքներ ընդունելու փուլում: Այս առումով այսպիսի միջոցները մեր համալսարանական ՈՒԿ-ներում կիրառելի չեն, թեև հետազոտական կենտրոնները կարող են մշակել և կառավարությանը ներկայացնել օրենսդրական բարեփոխումների փաթեթ, որը կներառի տվյալ միջոցները՝ հաշվի առնելով մեր երկրի առանձնահատկությունները:

Ֆինանսական միջոցների ներգրավման համար կարևոր է գիտական արդյունքների առևտրայնացումը: Գիտական արդյունքների առևտրայնացումը պետք է աստիճանաբար նաև ֆինանսական լրացուցիչ մուտքեր ապահովի: Առաջատար ՈՒԿ-ների բյուջեի միջոցների զգալի մասը հետազոտություններից ստացվող եկամուտներն են, մինչդեռ դրանք մեզ համար դրանք կարող են ֆինանսական կարևոր աղբյուր լինել: Մեր համալսարանական ՈՒԿ-ներում պատվիրատուների մեծ մասը միջազգային կազմակերպությունների հայաստանյան մասնաճյուղերն են, իսկ պետական հատվածի պատվերներն աննշան են:

Որպես ֆինանսավորման աղբյուր կարելի է օգտագործել կայքի միջոցով կատարվող նվիրատվությունները, ինչն արտասահմանյան ՈՒԿ-ներում վաղուց տարածված և բավական արդյունավետ գործիք է: Եթե նվիրատվությունը անանուն չէ, ապա դոնորի անունը կարող է հայտնվել հրապարակվող զեկույցներում: Նվիրատվությունների նվազագույն չափը 1 դոլար է: Մա բավական հեշտացնում է տվյալ գործընթացը: Կիրառվում է նաև Հայաստանում, սակայն կարելի է ասել, որ այս համակարգը գործում է միայն ՀԱՀ-ի՝ այն էլ միայն շատ քիչ թվով ՈՒԿ-ներում: Ուստի կայքի ստեղծման ժամանակ ցանկալի է ներառել նաև առցանց նվիրատվության հնարավորությունները:

**Նպատակային դրամագլխային հիմնադրամները՝ որպես ֆինանսական կայունության երաշխիք.** Endowment Նպատակային կապիտալը ֆինանսական կայունության ապահովման այլընտրանքային գործիք է: Ինչպես արդեն նշվել է, նպատակային կապիտալը ոչ առևտրային կազմակերպությանը բարեգործական նպատակներով տրվող այն գումարն է, որից օգտագործվում է միայն «եկամուտը», մինչդեռ «մայր գումարը» մնում է անձեռնմխելի:

Այս մոդելը գործում է ամերիկյան առաջատար ուղեղային կենտրոններում: Այն համարվում է հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունությունն ապահովող առավել գործուն միջոցներից մեկը ողջ աշխարհում:

**Ուսանողների ներգրավման ձևաչափեր:** Հաշվի առնելով ուսանողների ներգրավման առաջատար ՈՒԿ-ների փորձը, ինչպես նաև մեր երկրի առանձնահատկությունները, առաջարկում ենք՝

- ✓ վճարովի համակարգում սովորող ուսանողների համար իրականացնել սոցիալական ծրագիր՝ ՈՒԿ-ում ստացած աշխատավարձը տրամադրել որպես ուսման վճարի մի մասի փոխհատուցում,
- ✓ հետազոտական պրակտիկայի կազմակերպում՝ բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների մասնակցությամբ. աշխատանքները կարող են իրականացվել պրոֆեսորադասախոսական անձնակազմի հսկողության ներքո: Կարելի է նման ծրագրեր իրականացնել ուսումնական կիսամյակների ընթացքում՝ շաբաթական 10–15 ժամ ներգրավվածությամբ, կամ ամառային արձակուրդների շրջանում՝ առավել երկար ժամանակով: Վարձատրությունը կարող է իրականացվել շաբաթական վճարման կամ ամբողջ նախագծի միանվագ վճարման ձևով:

Ուսանողներից բաղկացած հետազոտական խումբն արդյունավետ կլինի կազմակերպել հետևյալ կերպ. խումբը բաղկացած լինի տարբեր մասնագիտության ուսանողներից (օրինակ՝ տվյալների հավաքագրմամբ և մշակմամբ զբաղվի վիճակագրություն մասնագիտության ուսանողը, տարբեր գործունների ընտրությունը և համակարգումն իրականացնեն այլ մասնագիտությունների ուսանողները):

- Որպես կանոն, այս կամ այն պետության ՈՒԿ-ները կազմում են ցանց և գործում են փոխլրացման սկզբունքներով: Արդարացիորեն համարվում է, որ նման համագործակցությունը խիստ արդյունավետ է և հաճախ ապահովում է սիներգետիկ էֆեկտ: Սա, կարծում ենք, նաև հայաստանյան ՈՒԿ-ների զարգացման և գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր պայման է:

Նկատենք, որ ՈՒԿ-ների համակարգի ստեղծումը աշխատատար և տևական գործընթաց է, պահանջում է համապատասխան «դպրոցների» և ավանդույթների ձևավորում, ստեղծագործ կադրերի պատրաստման տարաբնույթ մեթոդաբանության կիրառում (օրինակ՝ ամերիկյան ՌԵՆԴԻ կորպորացիան շտրիպալի հետազոտողների «բացահայտումը» նախընտրում է սկսել դպրոցներից) ու, թերևս ամենակարևորը, հանրության կողմից նման ՈՒԿ-ների անհրաժեշտության գիտակցում:

**Մագիստրոսական ծրագրերի կազմում:** ՈւԿ-ի համապատասխան կադրերի ապահովման հիմնական երաշխիքներից մեկը համալսարանական ուսումնական ծրագրերի կազմումն է՝ ըստ սեփական և գործնական պահանջների, սա նաև հնարավորություն կտա լրացուցիչ վերահսկողություն սահմանել ուսումնական գործընթացի վրա՝ համապատասխան որակ ապահովելով:

**ՈւԿ-ի կազմում արտաքին խորհրդատվական խորհրդի ձևավորում**՝ բաղկացած գիտական և պրակտիկ ոլորտների ականավոր ներկայացուցիչներից, որոնք կմշակեն գիտության, հանրային քաղաքականության և դասավանդման ոլորտներում առկա առաջնայնություններին համապատասխան զարգացման ուղղություններ:

**Առաջնորդության խորհրդի ստեղծում**՝ կազմված նորարարական ու ստեղծագործ մտածողներից և բիզնես առաջատարներից, որոնք կաջակցեն ՈւԿ-ի նպատակներին՝ միավորելով վերջինիս ռեսուրսներն ու իրենց գործարար կապերը ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ այս ոլորտում հիմնախնդիրները բավական շատ են, սակայն Հայաստանը խորհրդային տարիներից ժառանգել է գիտական հզոր բազա, և այս ոլորտի զարգացման հեռանկարներն անհույս չեն: Լինելով բնական ռեսուրսներով խիստ սահմանափակ երկիր, շրջափակված թշնամաբար տրամադրված երկրներով՝ Հայաստանի համար գիտական ինստիտուտների և, առհասարակ, գիտության զարգացումը այսօրվա հրամայականն է: Հույսով ենք այս աշխատանքն ու մեր մշակած առաջարկները իրենց համեստ ներդրումը կունենան համալսարանական ՈւԿ-ների, գիտության և ամբողջ Հայաստանի առաջընթացի ապահովման գործում:

Այսպիսով, «ուղեղային կենտրոնները» ժամանակակից ժողովրդավարական հասարակության ազդեցիկ քաղաքական դերակատարներն են, նույնքան կարևոր նույնքան մեծ է, որքան հասարակական, գործարար ոլորտի ու միջազգային կազմակերպությունները:

Պետական քաղաքականության ոլորտի գիտահետազոտական կենտրոնների կամ, այսպես կոչված՝ «ուղեղային կենտրոնների» թիվը վերջին տարիներին կտրուկ աճել է: Ընդ որում, ընդլայնվել են ոչ միայն նման կառույցների թիվը, այլ նաև դրանց հետազոտությունների շրջանակն ու ազդեցության ոլորտները:

Այսօր զարգացած և զարգացող աշխարհի քաղաքական գործիչներն ու քաղաքացիական հասարակությունները բախվում են կառավարման ոլորտի որոշումներում փորձագիտական հնտություններն ու գիտելիքները կիրառելու խնդրին: Մարտահրավերի էությունն այն է, որ օգտագործվեն աշխարհի տարբեր տարածաշրջանների հետազոտական կենտրոնների գիտելիքների և տեղեկատվության հսկայական պաշարները՝ հանուն հասարակական բարեկեցության: Այս պաշարների լայնությունն ու խորությունն նշանակալիորեն ընդլայնվեցին 1990-ականներին, քանի որ ուղեղային կենտրոններն արձագանքեցին կառավարման մարմինների և լայն հասարակության օգտակար, վստահելի, հասանելի և հասկանալի տեղեկատվության պահանջարկին: Սա բնորոշ էր քաղաքական որոշումների կայացման գործընթացին, ինչը գյուրալացման ուժերի ազդեցության հետ մեկտեղ արագացրեց անկախ ՌԻԿ-ների աճը՝ շնորհիվ վերջիններիս եզակի ունակության ամրացնելու հետազոտություններ-պրակտիկա լուծումների կամուրջը և, դրանով իսկ, մեծացնելու որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունն ու որակը: Արդյունքում, համանման ՌԻԿ-ներ այսօր կարելի է գտնել աշխարհի տարբեր երկրներում: Պետության, տարածքային և միջազգային ցանցերի միջոցով զարգացնելով և ամրապնդելով կապը ոչ կառավարական այլ կազմակերպությունների և հետազոտական կենտրոնների հետ, ՌԻԿ-ներն ամրապնդել են իրենց դերը որպես որոշումների կայացման գործընթացում ինտեգրալ ներդրողի և հիմնարար ու կիրառական հետազոտությունները հասարակության համար հասկանալի, վստահելի և հասանելի լեզվի «թարգմանողների»:

ՌԻԿ-ների ազդեցիկ դերի մասին է վկայում նաև դրանց աճը 20–21 դարերում, որի պատճառներն են՝

- տեղեկատվական և տեխնոլոգիական հեղափոխությունը,
- տեղեկատվության նկատմամբ ազգային կառավարությունների մենաշնորհի վերացումը,

- քաղաքական խնդիրների աճող բարդությունն ու տեխնիկական բնույթը,
- կառավարությունների և ընտրված պաշտոնատար անձանց նկատմամբ վստահության ճգնաժամը,
- գլոբալացումն ու պետական և ոչ պետական խաղացողների ավելացումը,
- ճիշտ ժամանակին և որոշակի տեղեկատվության և վերլուծության նկատմամբ պահանջը՝ «պահանջված տեսքով, ճիշտ ժամանակին և անհրաժեշտ ձևերում»<sup>72</sup>:

Թեպետ մեր ուսումնասիրած և, առհասարակ, բոլոր ուղեղային կենտրոններն ունեն տարբերիչ առանձնահատկությունները, այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ ուղեղային կենտրոնը հետազոտություններ իրականացնող գիտահետազոտական ինստիտուտ է, կազմակերպություն կամ մասնագետների խումբ, որը գաղափարներ, վերլուծություններ և խորհրդատվություն է տրամադրում պլանավորման և ռազմավարության հիմնախնդիրների շուրջ՝ հիմնականում քաղաքականության, տնտեսական, սոցիալական և ռազմական բնագավառներում: Նման հետազոտական կենտրոնները հաճախ ստեղծվում և գործում են համալսարաններին, կորպորացիաներին, ռազմական լաբորատորիաներին, քաղաքական կազմակերպություններին կամ կրթական այլ հաստատություններին կից: Դրանք հաճախ ներգրավում են տեսաբանների, հետազոտողների և ինտելեկտուալների բազմապրոֆիլ խմբեր, որոնք իրականացնում են վերլուծություններ և/կամ մշակում առաջարկներ քաղաքականության բնագավառում: Հետազոտական կենտրոնները կարող են նաև իրականացնել քաղաքական դիրքորոշումների պաշտպանություն: Դրանց իրականացրած հետազոտությունները և մշակած դիրքորոշումները խթանում են հասարակության մեջ կարևոր խնդիրների վերաբերյալ երկխոսությունը: Հետազոտական կենտրոնների պատվիրատու կամ ֆինանսավորող կարող են լինել պետությունը, մասնավոր կորպորացիաները, տարբեր ոլորտների գործարար միությունները, հիմնադրամները կամ դոնորները:

Համալսարանական ուղեղային կենտրոնների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում նաև տալու դրանց՝ մեր առանձնացրած հետևյալ բնորոշումները՝

- համալսարանական ուղեղային կենտրոնները (ՀՈԻԿ) իրականացնում են հետազոտություններ և առաջարկում դրանց գործնական

<sup>72</sup> 2012 Global Go To Think Tanks Index Report, James G. McGann Dr. *University of Pennsylvania*, jmcgann@sas.upenn.edu



լուծումներ, ինչպես նաև տրամադրում են խորհրդատվություն և կազմակերպում մագիստրոսական ուսուցում,

- հետազոտություններ իրականացնում են թե որոշակի պատվերով, թե սեփական նախաձեռնությամբ,
- հրապարակում են հոդվածներ, ամսագրեր, տեղեկագրեր և գրքեր, որոնք սովորաբար վաճառվում են ինչպես էլեկտրոնային տարբերակով, այնպես էլ տպագիր ձևաչափով,
- ուսումնասիրության շրջանակները թեև բավական լայն են և ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ, սակայն հիմնականում գերակշռում են քաղաքական և տնտեսական հետազոտությունները,
- աշխատակազմում ընդգրկվում են ինչպես դասախոսներ, այնպես էլ ավարտական կուրսերի ուսանողներ, պետական հատվածի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ,
- համագործակցում են այլ համալսարանների, ակադեմիաների և դպրոցների հետ և հարկ եղած դեպքում օգտվում են հրավիրյալ փորձագետների ծառայություններից,
- գործընկերային կապեր են հաստատում պետական կառավարման մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ, որոնք էլ նրանց հիմնական պատվիրատուներն են,
- ունեն ֆինանսավորման բազմազանեցված աղբյուրներ. ֆինանսական միջոցների գոյացման աղբյուր են, ինչպես համալսարանից ստացվող միջոցները, այնպես էլ նվիրատվություններն ու դրամաշնորհները,
- ունեն իրենց կայք էջը համացանցում, ինչպես նաև ներկայացված են լայն տարածում ստացած սոցիալական կայքերում:

1. Աթոյան Վ., Ուղեղային կենտրոններ. անցյալ, ներկա և ապագա, «Բանբեր» ՀՊՏՀ, N 1 (29), 2013, էջ 104–117:
2. Ժամկոչյան Ա., Բովանդակության վերլուծությունը. մեդիատեքստերի ուսումնասիրության մեթոդ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», թիվ 3, 2011:
3. Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում, Ուսումնական ձեռնարկ Ի. Տիգրանյանի խմբագրությամբ, Երևան, 2011:
4. ԵՊՀ գիտական խորհրդի որոշում N 1/9 2013 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1 նիստի ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
5. Ахременко А. С. Политический анализ и прогнозирование: учеб. пособие М.: Гардарики, 2006. 333 с.
6. Ежегодник ИМИ – 2013 / Отв. ред. А.А. Орлов. – Москва: МГИМО-Университет, 2013. Вып. 1(3). – 244 С.
7. McGann J.G. 2012 Global Go to Think Tanks Report and Policy Advice, 2012 Think Tanks and Civil Societies Program, International Relations Program University of Pennsylvania, Philadelphia, PA USA.
8. Bylaws of the Earth Institute Faculty proposed by the Academic Committee of the Earth Institute for approval by the Provost Peter Schlosser, Chair, Academic Committee; June 3, 2009.
9. The Earth Institute, Columbia University, 2012 Annual Donor Report.
10. Hoover Institution 2010 Report.
11. <http://www.armin.am>
12. <https://atsv7.wcn.co.uk>
13. <http://www.atomic-energy.ru>
14. <http://auachs.com>
15. <http://blogs.lse.ac.uk>
16. <http://www.ces.am>
17. <http://www.earth.columbia.edu>
18. <http://www.economicexpert.com>
19. <http://www.edweek.org>
20. <http://www.elrc.yasu.am>
21. <http://en.wikipedia.org/>
22. <http://www.hoover.org>
23. <http://issuu.com>
24. <http://leefs.ei.columbia.edu/>
25. <http://www.lse.ac.uk>
26. <http://www.mgimo.ru>
27. <http://newsroom.aua.am>
28. <http://www.noravank.am>
29. <http://www.nt.am>
30. <http://www.situation.ru>
31. <http://www.stanford.edu>
32. <http://www.ted.com>
33. <http://window.edu.ru>
34. <http://www.yasu.am>

*Հովերի ինստիտուտի տակտիկական խմբերը*

1.	Արկտիկական անվտանգության նախաձեռնություն (Arctic Security Initiative)
2.	Տնտեսական քաղաքականության աշխատանքային խումբ (Working Group on Economic Policy)
3.	Շուլց-Սթիվենսոնի Էներգետիկ քաղաքականության օպերատիվ տակտիկական խումբ (Shultz-Stephenson Task Force on Energy Policy)
4.	Արտաքին քաղաքականության աշխատանքային խումբ (Foreign Policy Working Group)
5.	Առողջապահության քաղաքականության աշխատանքային խումբ (Working Group on Health Care Policy)
6.	Մտավոր սեփականության, ինովացիոն և զարգացման աշխատանքային խումբ (Working Group on Intellectual property, Innovation and prosperity)
7.	Հերբերտ և Ջեյն Դուայթի մահմեդականության և միջազգային կարգի աշխատանքային խումբ (Herbert and Jane Dwight Working Group on Islamism and the International Order)
8.	K-12 կրթության Կորետ օպերատիվ տակտիկական խումբ (Koret Task Force on K-12 Education)
9.	Ժամանակակից հակամարտության ռազմական պատմություն (Military History in Contemporary Conflict)
10.	Ժան Պեկինսի ազգային անվտանգության և իրավունքի օպերատիվ տակտիկական խումբ (Jean Perkins Task Force on National Security and Law)
11.	Բոյդ և Ջիլ Սմիթի ազատ հասարակության օպերատիվ տակտիկական խումբ (Boyd and Jill Smith Task Force on Virtues of a Free Society)

*Մոլորակի ինստիտուտի /ՄԻ/ Հետազոտական միավորները*

1.	Գյուղատնտեսության և պարենային անվտանգության կենտրոն
2.	Կլիմայական համակարգերի հետազոտության կենտրոն (CCSR)
3.	Շրջակա միջավայրի կայունության կենտրոն (EICES)
4.	Բնական աղետների և ռիսկերի հետազոտության կենտրոն (CHRR)
5.	Եթովպիայի ազգային առողջապահության զարգացման կենտրոն
6.	Գետերի և գետախորշերի ուսումնասիրման կենտրոն
7.	Կայուն քաղաքային զարգացման կենտրոն
8.	Գիտության և կրոնի հետազոտական կենտրոն (CSSR)
9.	Գլոբալացման և կայուն զարգացման կենտրոն (CGSD)
10.	Կոլումբիայի կլիմայական կենտրոն
11.	Կոլումբիայի ջրային ռեսուրսների կենտրոն
12.	Տեխնիկական գիտությունների կենտրոն (Earth Engineering Center, EEC)
13.	Կլիմայի և հասարակության հետազոտության միջազգային կենտրոն
14.	Լամոնթ-Դոհերթի աստղադիտարան (Lamont-Doherty Earth Observatory, LDEO)
15.	Լենֆեսթի կայուն էներգետիկայի կենտրոն (Lenfest Center for Sustainable Energy, LCSE)
16.	Տարերային աղետներին պատրաստվածության ազգային կենտրոն (National Center for Disaster Preparedness)

*Մոլորակի ինստիտուտի հետազոտական ծրագրերը*

1.	Հիմնախնդրային նախաձեռնություն՝ Cross-Cutting Initiative (CCI)
2.	Մոլորակի կլիմայական
3.	Երեխաների բարեկեցության և արագ վերականգնման ծրագիր
4.	Գիտության, տեխնոլոգիաների և գլոբալ զարգացման ծրագիր
5.	Հազարամյակի զարգացման քաղաքների ծրագիր
6.	Հազարամյակի զարգացման գյուղերի ծրագիր

*Մոլորակի ինստիտուտի համապեղ կառույցները*

1.	Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման հետազոտությունների կենտրոն (Center for Research on Environmental Decisions, CRED)
2.	Կլիմայական հետազոտությունների և արդյունքների կիրառման համատեղ կենտրոն (Cooperative Institute for Climate Applications and Research, CICAR)
3.	Բնակչության լաբորատորիա (Laboratory of Populations)
4.	Քաղաքաշինական նախագծման լաբորատորիա (UDL, Urban Design Lab),
5.	Կայուն միջազգային ներդրումների Կոլումբիայի կենտրոն (Vale Columbia Center on Sustainable International Investment):

*Մոլորակի ինստիտուտի մասնաճյուղեր և կոնսորցիումներ*

1.	Համագործակցության, կոնֆլիկտների և բարդությունների ընդլայնված կենտրոն (Advanced Consortium on Cooperation, Conflict, and Complexity)
2.	Սև ժայռի անտառների կոնսորցիում (Black Rock Forest Consortium)
3.	Կլիմայական օրինաչափությունների փոփոխության կենտրոն (Center for Climate Change Law, CCCL)
4.	Միացիր սովորելու համար (Connect to Learn)
5.	Կիրառական ծրագրերի զարգացման ոլորտում մագիստրոսների գլոբալ համագործակցություն (Global Association of Master’s in Development Practice Programs)
6.	NASA Գոդդարդի անվան տիեզերական հետազոտությունների ինստիտուտ (NASA Goddard Institute for Space Studies (GISS)):

**Մոլորակի ինստիտուտի Կորպորատիվ շրջանակում ընդգրկված գործընկերները**

*Աջակցող անդամներ*

<b>ConEdison:</b> բավարարել էներգետիկ պահանջմունքները՝ վստահելի և շրջակա միջավայրի համար անվնաս միջոցներով
<b>EDF:</b> պայքար կլիմայական փոփոխությունների դեմ, կենսաբազմազանության պահպանություն
<b>Enel:</b> կայուն զարգացման վերաբերյալ համատեղ լուծումների և հետազոտությունների իրականացման ձգտում
<b>NationalGrid:</b> դեպի կայուն, նորարարական և մատչելի էներգետիկ լուծումների առաջադրում

*Հիմնադիր անդամներն ու ռազմավարական գործընկերները*

Aditya Birla–համայնքային և գյուղական զարգացում Հնդկաստանում
Becton Dickinson–ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելում և բուժում
Deutsche Bank–կլիմայական փոփոխություններ և քաղաքականություն
Eni–կայուն էներգետիկ ապահովվածություն. Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու աջակցություն
Ericsson–բջջային տեխնոլոգիաներ առողջության, գործարարության և կլիմայի համար
GE–կայուն Չինաստանի համար հետազոտություններ և պլանավորում
GlaxoSmithKline–Աֆրիկայում առողջապահությանն աջակցություն
HSBS–Նյու-Յորքում (NYS) կլիմայական փոփոխություններին հարմարում
KPMG–կայուն քաղաքային զարգացման նպատակով իրենց փորձառության ներդրում
Merck–առողջապահություն Աֆրիկայում
Nestle–պարենային անվտանգություն հազարամյակի գյուղերի նախագծում
Novartis–էլեկտրոնային բժշկական գրանցումների համակարգի ներդրում հազարամյակի գյուղերում
PepsiCo,Inc.–ածխածնային հետք (բնապահպանությունում այս կամ այն արտադրանքի գնահատումը ածխածնային միավորներով. օրինակ՝ բնական գազի ածխածնային հետքն ավելի փոքր է, քան ածխից ստացվող սինթետիկ վառելիքինը, որի ընթացքում ածխի մի մասն օքսիդանում է ) (Carbon Footprinting)
Pfizer Incorporated: գյուղերի համայնքային առողջության աշխատակիցներ
Procter & Gamble: բարելավել խմելու ջրի որակը գյուղերում

*Руководитель исследовательской группы*

**ВАРДАН КОРЮНОВИЧ АТОЯН**

кандидат экономических наук

*Состав исследовательской группы*

**ОВСЕПЯН С.**

магистрант

**МКРТЧЯН А.**

магистрант

**МОВСИСЯН Ш.**

магистрант

**БУДАГЯН Р.**

магистрант

**МУРАДЯН А.**

магистрант

***Исследование деятельности передовых университетских  
«мозговых центров» и возможности внедрения передового  
опыта в РА***

Работа посвящена изучению деятельности и особенностей передовых университетских «мозговых центров» (МЦ) и выявлению возможностей по внедрению передового опыта иностранных МЦ в Армении. В ходе исследований было изучено 20 иностранных МЦ, из которых 6 представлены более подробно. В рамках данного исследования так же было изучено деятельность армянских университетских МЦ.

*Head of research team*

**ATOYAN VARDAN KORYUN**

PhD in Economics

*Members of research team*

**HOVSEPYAN S.**

Master

**MKRTCHYAN A.**

Master

**MOVSISYAN SH.**

Master

**BUDAGHYAN R.**

Master

**MURADYAN A.**

Master

***Research on activity of leading foreign University Affiliated „think tanks” and the best localization opportunities in RA***

The work is devoted to the analysis of the nature, activity and main characteristic features of University Affiliated Think Tanks, and identification of the best investment opportunities in the Republic of Armenia. Within the study twenty International University Affiliated Think Tanks were observed, six of them were presented in more detail, as well as the activity of Armenian University Affiliated Think Tanks.





*Հնարագորական խմբի ղեկավար՝  
ՎԱՐԳԱՆ ԿՈՐՅՈՒՆԻ ԱԹՈՅԱՆ  
տնտեսագիտության թեկնածու*

*Հնարագորական խմբի անդամներ՝  
ՀՊՏՀ ԿՐՆՍՐ. Կարգավորման և ՄՏՀ ֆակուլտետի  
ՄՏՀ մասնագիտության II կուրսի մագիստրանտներ  
ՍՏԵԼԼԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ  
ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ  
ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ  
ՌՈՋԱ ԲՈՒԴԱՂՅԱՆ  
ՌՈՒՋԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ  
ԱՍՏՂԻԿ ՄՈՒՐԱԳՅԱՆ*

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ  
«ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ  
ՆԵՐԳԻՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Խմբագիր՝ **Վ. Միրզոյան**  
Տեխնիկական խմբագիր՝ **Ն. Խչեյան**

Էջադրումը և սրբագրումը՝ **Ս. Բոյաջյանի**  
Ձևավորումը՝ **Ն. Խչեյանի**

Չափս՝ 70×108<sup>1/16</sup>:  
5,25 տպ. մամուլ:  
Տպաքանակ՝ 100:

---

**ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն  
Երևան, Նալբանդյան 128  
010 59 34 37**